

23213

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հ. Խ. Ս. Մ. ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Յ Ե Վ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՅՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ

1927 թ. հունվար մեկից մինչև 1927 թ. դեկտեմբերի 31-ը:

Ռ Ս Դ Ո Ւ
1927 թ.

331.11

2 - 39

331.11

2-39

ար

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հ. Խ. Ս. Մ. ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ԱՂԻՐԲԵՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Յ Ե Վ

ԱՂԻՐԲԵՋԱՆԻ ՀԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՅՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ

1927 թ. հունվար մեկից մինչև 1927 թ. դեկտեմբերի 31-ը:

Ե Ա Վ Ո Ւ
1927 թ.

Напечатано в Гостипогр.

„Красный Восток“

БАКПОЛИГРАФА

Главлит. № 1664. Баку.

Зак. № 4882. Тир. 1000.

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Մ Ս Ս Լ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

§ 1.

Ներկա հավաքական պայմանագիրը կնքվում է
Հ. Խ. Ս. Մ. Հանրապրծնների Միության Աղբյուրների
Կենտրոնական Վարչության՝ հանձինս Միության Վարչության
Նախագահ՝ Գուտին Սեմյոն Արեւովիչի, Միության
Վարչության Բարտուղար՝ Ուսագ Ալի Զեյնա-
լովի ու Միության ՏԵՍ-ի Վարիչ՝ Մեշկով Պյոտր Իլ-
լարիոնովիչի, վստահ գործում են 1927 թ. փետրվա-
րի 27-ի արձանագրությամբ № 10 42 5-րդ կետի հի-
ման վրա մեկ կողմից և Աղբյուրների Նավթ-արդյունա-
րերության Պետական Միացման Վարչության միջև
միուս կողմից՝ հանձինս Միացման Վարչության Նա-
խագահ Բարինով Միխայիլ Վասիլյևիչի, վարչության
անդամ Լավրենտև Յակով Վասիլյևիչի, վարչության
անդամ Բրուկին Յակով Պավլովիչի և Աշխատանքի
Նկատման Կառավարիչ Շեյնին Բորիս
Մոխոմիլովի, վստահ գործում են համաձայն հավա-
քման գրքի:

Ծանոթություն. Հետագայում կրճատման նպատակով առաջին կողմը անվանվում է՝ «Միություն» իսկ յերկրորդը «Ազնավթ»:

§ 2.

Պայմանագիրը տարածվում է, գոյություն ունեցող կամ նոր բացվող, միության կողմից միացվող, բոլոր աշխատող ու նոր գործի ընդունվող Ազնավթի ձեռնարկությունների կամ հիմնարկությունների՝ բանվորների, ծառայողների և աշխիստարատիվ տեխնիքական պերսոնալի վրա, բացի գործի ընդունելու և գործից արձակելու իրավունք ունեցող բարձր ազմի-նիստրատիվ պերսոնալից:

Այն պաշտոնների ցուցակը, վորոնց վրա այս հավաքական պայմանագրի ուժը չի տարածվում, կցված է ներկա պայմանագրին (Հավել. № 1):

§ 3.

Ազնավթը ներկայացնում է միությանը իր կողմից կնքված բոլոր անհատական պայմանագրերի պատճենները, յերկու շաբաթվա ընթացքում—հաշվելով ներանց կնքելու օրից: Այս պայմանագրի ժամկետի ընթացքում, վոչ մի անհատական համաձայնություններ այն աշխատավորների հետ, վորոնց վրա տարածվում է ներկա պայմանագիրը, չի կարող կնքվել առանց միության համաձայնության:

§ 4.

Ներկա պայմանագիրը իր ուժի մեջ է մտնում 1927 թ. հունվար 1-ից ու կնքվում է 12 ամսով, մինչ 1927 թ. դեկտեմբեր 31-ը:

§ 5.

Այս պայմանագրի ուժի ընթացքում նրա առանձին կետերն ու մասերը կարող են փոփոխվել ու լրացվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Պայմանագիրը լրացնելու կամ փոփոխելու մի կողմի գրավոր առաջարկությանը հակառակ կողմը պարտավոր է պատասխանել մի շաբաթվա ընթացքում: Այդ ժամանակամիջոցին պատասխանի բացակայությունը—փոփոխման կամ լրացման համաձայնություն է համարվում:

Փոփոխություններն ու լրացումները մտնում են իրենց ուժի մեջ, պայմանավորվողների կողմից նրա ստորագրման ժամից, յեթե միայն համաձայնության մեջ չի հիշված ուրիշ ժամկետ:

Փոփոխություններ աշխատանքի պայմանների վատացման ուղղությամբ, չեն կարող մտցվել հետին թվով:

§ 6.

Պայմանագրի վերաքննման մասին կողմերի դիմումի բացակայության դեպքում, նրա ժամկետը համարվում է յերկարացրված մինչև նոր պայմանագրի կնքելը, կամ գոյություն ունեցող պայմանագրի ժամկետի ավելացումը վորոշ ժամանակով:

Մի կողմի դիմումը պայմանագրի վերաքննման մասին պետք է հայտնվի մյուս կողմին, պայմանաժամը վերջանալուց յերկու շաբաթ առաջ: Կողմերի հայտարարությունը մի շաբաթվա ընթացքում պարտավորեցնում է բանակցություններ սկսել: Յեթե կողմերը, պայմանագրի վերաքննման մասին արած նը-

րանցից մեկի դիմումին, բանակցությունները չեն սկսում մի շաբաթվա ընթացքում դիմումը ստանալու որից՝ ապա պայմանագրի ժամանակը համարվում է յերկարացված մեկ ամսով: Յեթե նախ քան ներկա պայմանագրի ժամանակի լրանալը կողմերը չհասցբին վերջացնել իր ժամանակին սկսած բանակցությունները՝ ապա նախ քան նոր պայմանագրի ույժի մեջ մտնելը, աշխատանքի պայմաններն ու աշխատավարձի խնդիրները ղեկավարվում են հին հավաքական պայմանագրով: Այս պայմանը չի նախորոշում նոր պայմանագրի գործողության ժամկետը, վերը վերոշում են կողմերը նոր պայմանագրով:

§ 7.

Ներկա պայմանագրի հիման վրա ծագած վեճերն ու կոնֆլիկտները, նույնպես և բոլոր հարցերը, վերոնք Աշ. Որ. Կողբսով ու պայմանագրով վերադերվում են Գնահատ. Կոնֆլիկտ. Հանձնաժողովների (P.K.K.) վրա վերոշելու համար, կազմակերպվում են Ազնավթի առանձին ձեռնարկներում ու հիմնարկություններում Տեղական Գնահատ. Կոնֆլ. Հանձնաժողովներ, վերոնք գործում են այս պայմանագրին կցված հավելման համաձայն: (Հավել. № 2):

Այն վեճերը, վերոնք վերջնականապես չեն վճռվում Գ.Կ.Հ-ում, վճռվում են Աշ. Որ. Կող. նախատեսված 168-ից մինչև 174 հոդվածների համաձայն:

Մ Ա Ս 11.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼԸ, ԱՐՁԱԿԵԼԸ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՓՈԽԵԼԸ.

§ 8.

Ազնավթը գործի է ընդունում առաջին հերթին պրոֆմիթյունների անգործ՝ անդամներին: Գործի ընդունելը կատարվում է միայն Աշխատանքի Բորսայի միջոցով: Բացառիկ դեպքերում բարձր վորակի աշխատավորներն ու մասնագետները կարող են հրավիրվել աշխատանքի առանց Աշխատանքի Բորսայի: Գործի ընդունելիս աղմինխտրացիան պարտավոր է 3 օրվա ընթացքում հայտնել այդ մասին միության տեղական համապատասխան օրգաններին, վերոնց իրավունք է տրվում պատճառաբանված բոլոր ներկայացնել 3 օրվա ընթացքում, հաշվելով հայտարարությունը ստանալու օրից:

§ 9.

Յեթե գործի ընդունելիս աշխատավորին փորձի են յենթարկում, ապա Ազնավթի աղմինխտրացիան մտցնում է փորձվող աշխատավորին համապատասխան տարիֆային կարգը:

Աշխատավորները, վերոնց օրինական ժամանակը լրանալուց հետո, չի հայտարարվում փորձության հեռանքը (Աշ. Որ. Կոտ. 38-րդ Հոդ.) համարվում են վերջնականապես գործի ընդունված:

Ծանոթություն: Աշ. Որ. Կող. 38-րդ հոդվածի համաձայն, յեթե փորձության ժամանակ

աշխատավորը արձակվում է գործից, ապա այդ արձակումը չի յենթարկվում ԳԿՀ-ի քննութ-
թյան:

§ 10.

Ի լրացում Աշ. Որ. Կող. 36, 37, 44-ից մինչ
40, 88-ից մինչ 90 հոդվածների, վարդվում է՝

ա) Շտատներին կամ արտադրության կրճատման
դեպքում, առաջին հերթին հավասար վարակի դեպքում
արձակվում են վոչ միության անդամները:

բ) Կանայք, վարձք ունեն մանր՝ յերեխաներ
կամ այլ անձինք, վարձք պահում են իրենց հաշվին,
շտատների կրճատման ժամանակ, այլ հավասար պայ-
մանների դեպքում, առավելություն է տրվում, նրանց
գործի մեջ թողնելու մտքով:

գ) Հիմնարկության ամբողջական կամ մասնակի
լիկվիդացիան և կամ շտատների կրճատումը թույլ է
տրվում միայն նախապես միության հետ համաձայ-
նության գալուց հետո: Խոշոր կրճատումների կամ
գործի դադարեցման մասին պետք է հայտնվի միու-
թյանը մեկ ամիս առաջ:

Կրճատման յենթարկվածների ցուցակը համա-
ձայն Աշ. Որ. Կող. 47-րդ հոդ. «ա» և «բ» կետերի,
կազմում է ադմինիստրացիան ու հայտնում է կոմի-
տեին արձակման մասին՝ վոչ ուշ քան արձակումից 3
օր առաջ: Յեթե կոմիտեն չի համաձայնվում աշխա-
տավորներից վորհե մեկի արձակման հետ, ապա հար-
ցը վճռվում է սովորական կոնֆլիկտային ձևով:

Աշ. Որ. Կող. 47-րդ հոդ. «ա» և «բ» կետերի
համաձայն, գործից արձակելը կարող է տեղի ունենա,

միայն այն դեպքում, յեթե աշխատավորին անկարելի
է տեղափոխել Ազնավթի մի ուրիշ հիմնարկություն,
նույնպես և այն դեպքում յեթե աշխատավորը համա-
ձայն չէ տեղափոխվել Ազնավթի մի ուրիշ հիմնարկու-
թյուն:

դ) Համաձայն Աշ. Որ. Կող. 47-րդ հոդ. «ա», «բ»
և «գ» կետերի, նույնպես և ինվալիդության դեպքում
տրվում է վիսադնոյ նպաստ նրանց՝ ամսվա տարի-
ֆային վարձի կեսը այն դեպքում, յեթե արձակվողը
նախազգուշացվում և արձակումից յերկու շաբաթ ա-
ռաջ ու մի ամբողջ ամսվա տարիֆային վարձ՝ այն
դեպքում, յեթե չի նախազգուշացված: Մնացյալ ար-
ձակման դեպքերում համաձայն Աշ. Որ. Կող. 47-րդ
հոդվածի, նախազգուշացում չի պահանջվում ու վի-
սադնոյ նպաստ չի տրվում:

յե) Ժամանակավոր աշխատանքների պայմանները
դեկավարվում են՝ 1927 թ. հունվարի 14-ի Հ.Պ.Ս.Մ.
Կենտ. Գործ. Կոմիտեի և Ժողկոմխորհի վորոշմամբ՝
«Բանվորների ու ծառայողների ժամանակավոր աշխա-
տանքների մասին»:

զ) Աշ. Որ. Կող. 47-րդ հոդ. «Ժ» կետի համա-
ձայն, գործից արձակելը ժամանակավորապես աշխա-
տանքի ընդունակությունը կորցնելու պատճառով, կա-
տարվում է աշխատանքի ընդունակությունը կորցնե-
լուց 4 ամիս հետո: Իսկ յեթե հիվանդությունը առաջ
է յեկել հաշմությունից (ուվեչիե) նույնպես և հղիու-
թյունից ու ծննդաբերությունից, ապա արձակումը
թույլ է տրվում միայն 6 ամիս գործի դուրս չգալուց
հետո:

ե) Համաձայն Աշ. Որ. Կող. 47-րդ հոդ. «ա» «բ» «գ» «դ» կետերի, նույնպես և ինվալիդության պատճառով գործից արձակելու դեպքում, աշխատավորները ստանում են վարձատրություն. Ազնավթի հիմնարկություններում յերկարատե ու անընդհատ ծառայության համար: 3-ից մինչև 5 տարի ծառայողը ստանում է կես ամսվա տարիֆային վարձ, իսկ 6 տարուց ավել ծառայողը ստանում է մի ամսվա տարիֆային վարձ:

Ծանոթություն. — 1) Ծառայության սկիզբը հաշվվում է վերջին անգամ Ազնավթը գործի ընդունվելու օրից:

2) Վոչ Ազնավթի հիմնարկություններ անցնելը, բացի պրոֆմիությունների կամ քաղաքական օրգանների ընտրվող պաշտոնների անցնելը, համարվում է ընդմիջում:

ը) Այն աշխատավորները, վորոնք ընտրվում են պրոֆմիության, քաղաքական, կոոպերատիվային ու խորհրդային կազմակերպություններում աշխատելու համար, իրավունք ունեն վերադառնալու իրենց նախկին պաշտոններին կամ համապատասխան տեղ գրավել: Հիշյալ անձնավորությունները իրենց ընտրվելու ու այդ կազմակերպություններում աշխատելու ընթացքում վոչ մի վարձատրություն չեն ստանում Ազնավթի հիմնարկությունների ադմինիստրացիայից:

§ 11.

Գործից արձակվող բանվորի կամ ծառայողի վարձատրությունը պետք է տրվի մինչև փաստացիորեն նրա հետ հաշիվ մաքրելու օրը, իսկ յեթե հաշիվը չի

մաքրված բանվորի կամ ծառայողի պատճառով՝ ապա վերջնական ժամկետը համարվում է նրա գործը թողնելու օրը:

§ 12.

Գործից արձակելու բոլոր դեպքերը կատարվում է նախորոք կոմիտեյին հայտնելով (Աշ. Որ. Կող. 161-րդ հոդ. կետ գ.). ըստ Աշ. Որ. Կող. 47-րդ հոդ. «գ» «դ» «յե» «զ» կետերի, կատարվում է ԳԿՀ-ի վորոշմամբ. ըստ «դ» կետի համաձայն ներքին կանոնադրությունների օրենքների ու տուգանքների ցուցակի (տարել վզիսկանի) կցված սույն պայմանագրին, (հավել. № 3) և ըստ «յե» կետի համաձայն Անդրկ. Աշ. Ժող. Կոմ. 1925 թ. հունվարի 16-ի վորոշման (Հավելում № 4):

§ 13.

Աշխատավորների վերին կարգից դեպի ներքին կարգը տեղափոխելը կարող է տեղի ունենալ հետևյալ դեպքերում՝

ա) Այն դեպքում յերբ աշխատավորի գործելու ընթացքում պարզվում է, վոր նա չի համապատասխանում իրեն նախնական վորոշված կարգին:

բ) Այն դեպքում յերբ բարձր կարգի համար չկա համապատասխան աշխատանք:

Ներքին կարգ անցնել չցանկացողը կարող է արձակվել գործից, վճարելով նրան վիխադնոյ նպաստ, համաձայն սույն պայմանագրի § 10 «յե» կետի:

Ծանոթություն 1. «ա» և «բ» կետերի ճշտությունը վորոշում է ԳԿՀ-ն:

2. Ներքին կարգ անցնողը, անցնելու որից յերկու շաբաթվա ընթացքում, ստանում է վոչ պակաս քան իր նախկին պաշտոնի միջին աշխատավարձը:

Մ Ա Ս III.

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԸ.

§ 14.

Արտադրութեան չափը վորոշում է Ազնավթի հիմնարկութեան ադմինիստրացիան ու հաստատվում է ԳԿՀ-ի կողմից, վորից հետո կախվում է հիմնարկութեան աչքի ընկնող մի տեղ, ի գիտութիւն բոլոր աշխատավորներին:

Ծանոթութիւն. Բացառիկ դեպքերում յերբ անկարելի է հետաձգել, թույլ է տրվում ադմինիստրացիային վորոշել արտադրութեան չափը այն աշխատանքների համար, վորոնց տեղողութիւնը 3 որից ավել չէ, հետագայում ԳԿՀ-ի հաստատմամբ: Մինչև չափի ու գնահատման հաստատման կատարած աշխատանքները, վարձատրվում են ըստ ԳԿՀ-ի վորոշված գների, բայց վոչ պակաս քան հայտարարված է գործը հանձնելու ժամանակ:

§ 15.

Արտադրութեան չափը վորոշվում է մաքսիմալ տեխնիքային հնարավոր արտադրութեան ներկա պայմաններում՝ հաշվի առնելով միջակ բանվորին ու համապատասխան նորմալ բանվորական որը այդ աշխա-

տանքի կարգի համար և հաշվի չառնելով բանվորան կան որվա տեղողութիւնը այդ աշխատավորի կարգի համար, նույնպէս և գործը կատարելու ժամանակը:

§ 16.

Այս պայմանագրով ապահոված աշխատավարձով բանվորները պետք է կատարեն վորոշված արտադրութեան չափը, աշխատանքի համապատասխան վորակով: Առանց հարգելի պատճառների գործի հաճախակի լրիվ չկատարումը, կամ վատ վորակի աշխատանքը, կարող է ԳԿՀ-ի վորոշմամբ հիմք ծառայել աշխատանքի պայմանագրի լուծման ու այդ պայմանները չկատարողների գործից հեռացման համար: (Աշ. Որ. Կող. 57-րդ Հոդ.):

Մ Ա Ս IV.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՃԱՐԻ ԶԱՓՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ.

§ 17.

Աշխատավորների վարձատրութիւնը համաձայն նրանց վորակի, կատարվում է ըստ 17 կարգային տարիֆային ցանցի՝ համեմատութեամբ 1 կարգի վարձատրութիւնը 10-րդին, ինչպէս 1:3 և 1:17, ինչպէս 1—10-ի: Պաշտոնների ու վորակի բաժանումը 17 կարգերի, կցված է ներկա պայմանագրին: (Հավել. № 5):

Այս պայմանագրին կցված հավելման մեջ չհիշված աշխատանքների ու պաշտոնների բաժանումը կատարում է Ազնավթը, միութեան հետ համաձայնութեան գալուց հետո:

§ 18.

Ամսական աշխատավարձ 1-ին կարգի համար վերցվում է 18 րուբլի: Ամսավճարի ու որավարձի վճարը ֆնացյալ կարգերի ու նրանց միջի բաժինների փոխադարձ համեմատությունը հետևյալն է.

ԽԱՐՉԸ	Բաժինների փոխադարձ հարաբերությունը	Որավարձը		Ամսավարձը	
		Րուբ.	Կոպ.	Րուբ.	Կոպ.
1	1,0	—	75	18	00
2	1,3	—	98	23	40
3	1,6	1	20	28	80
4	1,8	1	35	32	40
5	2,0	1	50	36	00
6	2,5	1	88	45	00
7	2,8	2	10	50	40
8	3,1	2	33	55	80
9	3,5	2	63	63	00
10	3,8	2	85	68	40
11	4,2	3	15	75	60
12	4,6	3	45	82	80
13	5,0	3	75	90	00
14	5,5	4	13	99	00
15	7,0	5	25	126	00
16	8,5	6	38	153	00
17	10,0	7	50	180	00

Ծանոթություն. Տարեփայլին վճարը ավելացվում է՝

- ա) Բինադադու, Խորադանի, Մադադյանի, Բզովնու շրջաններում 5%-ով:
- բ) Շուբանու շրջաններում, Արտյոմի կղզում, Ղալա ու Փուլթա 10%-ով.
- գ) Մասադիր, Դիգիյա ու Ֆաթմայի շրջաններում 15%-ով.
- դ) Նովխանյում—20%-ով.
- ե) Ղարադաղի, Կերգեղի, Ղըզլի ու Սալիանի շրջաններում—25%-ով.
- ժ) Չաիլ-Դաղի շրջանում—30%-ով.

§ 19.

Ներքին կարգի ծառայող պերսոնալի բանվորների, նույնպես և վախտենի ծառայողների—վորոնք կոմպենսացիա չեն ստանում—աշխատավարձը հաշվում է որավարձի հիման վրա ու նրանց փաստացի գործի դուրս գալու հաշվով: Մնացյալ ծառայողների համար աշխատավարձը հաշվում է ամսական տարեփայլին վարձի հիմունքներով ու առանց հարգելի պատճառների գործի դուրս չգալու համար, նրանցից պահվում է որավարձը:

§ 20.

Որավարձը հավասար է $\frac{1}{24}$ ամսվա տարեփայլին վարձին:

Որավարձով աշխատողների ժամավարձը վորոշվում է ներկա աշխատավորի համար վճռված նորմալ բանվորական որվա ժամերի քանակով ու այն տարե-

Ֆալին կարգով, վորին պատկանում և ներկա աշխատավորը:

Ամսամիսար ստացողների ժամավարձը վորոշվում և ի նկատի առնելով 144 ժամ՝ 6 ժամյա բանվորական որվա դեպքում և 192 ժամ՝ 8 ժամյա կամ չհավաքողական բանվորական որվա դեպքում:

§ 21.

Ազնավթը իր սեփական կամ արենդով վերցրած տներում հատկացնում և բոլոր աշխատավորներին, հնարավորութեան չափ այն շրջաններում վորտեղ գործում և աշխատավորը՝ ձրի բնակարան, միանգամայն պետքական ապրելու համար, վառելիքով, լուսավորութեամբ ու ջրով:

§ 22.

Հանրակացարաններում (որչիեթիտիե) պետք և լինեն բավական քանակութեամբ սեղաններ, նստարաններ, պահարաններ և լվացարաններ:

Հանրակացարանում ապրող մի աշխատավորի տրվում և առանձին յերկաթե մահճակալ տախտակներով կամ ցանցով և մատրաս:

Ազնավթը տալիս և բավական չափով ձրի վառելիք, լուսավորութեան և յեռացրած ջուր:

Ամեն մի հանրակացարանին կից պետք և լինի առանձին իսհանոց բավականաչափ վառարաններով (պլիտա):

Հանրակացարանը պետք և պահվի մաքուր Ազնավթի հաշվին ու նրա ուժերով:

§ 23.

Յեթե Ազնավթը հնարավորութեան չափն հատկացնելու բնակարաններ ու բնակարանային պիտույքներ, ապա դրա փոխարեն աշխատավորներին պետք և տրվի բնակարանային փող՝ ընտանիք չունեցողներին 4 բուր 88 կոպ. ընտանիքավորներին 9 բ. 75 կոպ. Համապատասխան կերպով վարձատրվում են չհատկացված բնակարանային պիտույքների համար: Ամսվա ընթացքում բնակարանային պիտույքների չափը կցված և այս պայմանագրին (Հավել. № 6):

1003
14140

Ծանոթութեան. ա) Ընտանիքավոր և հաշվում այն աշխատավորը, վորի ընտանիքի անդամները ապրում են իրեն մոտ: Յեթե միեւնույն բնակարանում ապրող մի ընտանիքի մի քանի անդամները ծառայում են Ազնավթում, ապա նրանցից ամեն մեկը համարվում և վորպես ընտանիք չունեցող:

բ) Ընտանիքի անդամներ են համարվում՝ աշխատավորի կինը, աշխատավորի կամ նրա կնոջ ծնողները, յեթե միայն նրանք աշխատանքի անընդունակ են ու ապրում են նրա հաշվին: Աշխատավորի կամ նրա կնոջ յերեթուները մինչև 16 տարեկան աշխատավորի կամ նրա կնոջ բույրերն ու յեղբայրները նրա հաշվին ապրող՝ ուսանողները հաշվում են ընտանիքի անդամներ՝ մինչև ուսման ավարտելը:

գ) Յեթե աշխատավորը հրաժարվում և Ազնավթի կողմից իրեն հատկացրած բնակարանից, վորը համապատասխանվում և իր ընտանիքի չա-

փին, ապա Ազնավթը ազատվում է նրան բնակարանային վարձ վճարելու պարտականութիւնից:

§ 24.

Ընթացիկ ամսվա բնակարանային վարձը պետք է տրվի կանխավճարի (ավանս) հետ միասին:

§ 25.

Ի լրացում Աշ. Որ. Կող. 65 և 67 հոդվածների վորոշվում է՝ աշխատավարձը վճարում է ամիսը յերկու անգամ:

ա) Վոչ ուշ Ընթացիկ ամսվա 24-ից աշխատավորներին տրվում է կանխավճար (ավանս)՝ նրանց հատկացրած տարիֆային վճարի 50%-ը և բնակարանային վարձ, համաձայն ներկա պայմանագրի § 23-ի:

բ) Վոչ ուշ հետևյալ ամսի 10-ից կատարվում է ամսվա լիակատար վերջնական հաշիվը (բասշոտ)՝ վորով վճարում է հաշվից դուրս գալով տրված կանխավճարը, մնացած աշխատավարձը—սովորական, արտաժամյա, սղեխի, պրեմիալ, ֆուտովոյ ու աշխատավարձի այլ տեսակները:

Ծանոթութիւն.—Չի թույլատրվում վոչ մի այլ ձևի աշխատավարձի վճարումը, ոտճիկային ցուցակից դուրս (վեդոմոստ):

§ 26.

Պորեմեննի վճար թույլ է տրվում միայն այն աշխատանքների վերաբերմամբ, վորոնք ղժվարությամբ են յենթարկվում չափավորման: Մնացյալ բոլոր գործերի վերաբերմամբ կատարվում է սղեխի

վարձատրութիւն (սղեխնայա ոպլատա): Պրեմիալ վարձատրութիւն թույլ է տրվում Ազնավթի ու միութիւնի առանձին համաձայնութիւնի դեպքում:

§ 27.

Սղեխի գնահատումը վորոշվում է բացառապես աշխատանքի կարգով և վոչ թե այդ աշխատանքը կատարող անձնավորությամբ. բաժանելով որվա՝ տարիֆային վճարը, ավելացնելով 80% վորոշված արտագրութիւնի չափի վրա:

§ 28.

Աշխատավորի միջին որվա աշխատավարձը՝

ա) Գործի դուրս գալու ամեն որվա համար վարձ ստացողների ու պայմանական վարձատրությամբ (սղեխի) աշխատանքներ կատարողների միջին որավարձը ստացվում է, աշխատավարձը վճարելուն հախընթաց 2 ամիսներին Ազնավթից ստացված աշխատավարձի (տարիֆային վճարի, պայմանական, մշտական արտաժամյա, ֆուտովոյ, պրեմիալ և այլ) բաժանելով նույն ամիսների պարտագիր գործի դուրս գալու օրերի թվի վրա, հաշվից դուրս գալով հիվանդութիւնի պատճառով բաց թողված բանվորական օրերը, վորոնք վճարված են Ապահովագ. Դրամաբիդի կողմից:

բ) Ամսավճար ստացողներին—աշխատավարձը վրձարելուն հախընթաց 2 ամիսներին Ազնավթից ստացված աշխատավարձը 48-ի բաժանելով, հաշվից դուրս գալով հիվանդութիւնի պատճառով բաց թողված բանվորական օրերը, վորոնք վճարված են Ապ. Դրամ. կողմից: Բոլոր աշխատավորների յերկու շաբաթվա

կամ մեկ ամսվա միջին աշխատավարձը վերոշվում է—
միջին որավարձի բաղմապատկելով 12-ի կամ 24-ի:

Ծանոթություն՝ 1—Յերկու ամսից պակաս
ծառայած աշխատավորի միջին որավարձը—վո-
րոշվում է՝ աշխատավարձը վճարելուն նախընթաց
մի ամսվա փաստացի աշխատավարձի բաժանելով
նոյն ամսվա պարտադիր գործի դուրս գալու
օրերի վրա կամ 24-ի, հաշվից դուրս գալով հի-
վանդության պատճառով բաց թողված օրերը,
վորոնք վճարված են Ապ. Դրամ. կողմից:

2) Միջին աշխատավարձի մեջ չեն մտնում
միանվագ վարձատրությունները (տանտեմա,
պարգև, վարձատրություն պատահական աշխա-
տանքի համար, նույնպես և արտաժամյա վարձ,
վորը սխտեմատիկ ընդթ չի կրում):

3) Սխտեմատիկ արտաժամյա աշխատանք
պետք է հասկանալ, արտաժամյա այն աշխատանքը,
վորը կատարում է միևնույն աշխատավորը պար-
բերաբար 3 ամսա ընթացքում, վոչ պակաս քան
24 ժամ 3 ամսում:

§ 29.

Հանգստյան օրերին ու զեկրետով վերոշված հե-
ղափոխական տոներին, նույնպես և նախատոնական
օրերին 6 ժամից ավել աշխատանքը վճարվում է կրկի-
նակի չափով:

Սղեւնի վարձատրությամբ (սղեւշիկ) աշխա-
տողները, վորոնք աշխատում են հանգստյան օրե-
րին, զեկրետով վորոշված հեղափոխական տոներին,
նույնպես և նախատոնական օրերին 6 ժամից ավել

րացի իրենց սղեւնի աշխատավարձից ստանում են
նաև իրենց ամբողջ տարիֆային վարձը աշխատած
ժամերի համաձայն:

Ծանոթություն. — Սղեւնի վարձատրությամբ
աշխատողները — հանգստյան օրերի և հեղա-
փոխական տոների նախօրյակին լրիվ չաշխա-
տած արտոնյալ (լգոտնի) ժամերի համար վարձ
չեն ստանում:

§ 30.

Առանձին (կրոնական տոներին) հանգստյան
օրերին աշխատավորների գործի դուրս գալը վարձա-
տրվում է վորպես սովորական օր, իսկ գործի դուրս
գալը աղմինխտրացիայի կարգադրությամբ վճարվում
է կրկնակի չափով:

Սղեւնի վարձատրությամբ աշխատանքներ կա-
տարողները աղմինխտրացիայի կարգադրությամբ
կրոնական տոներին գործի դուրս գալիս, բացի իրենց
պայմանական աշխատավարձից ստանում են իրենց
տարիֆային վարձը աշխատած ժամանակի համա-
ձայն:

§ 31.

Սովորական օրերին, աղմինխտրացիայի կարգա-
դրությամբ նորմալ ժամանակից ավել աշխատանքը
վարձատրվում է մեկ ու կես չափով առաջին յերկու
ժամերի ու կրկնակի չափով հետագա ամեն մի ժամի
համար:

Սղեւնի վարձատրությամբ աշխատողները այդ
դեպքում, բացի իրենց պայմանական վարձա-

տրութիւնն ից ստանում են իրենց ժամյա տարիֆային վարձի կեսը նորմալ ժամանակից ավել աշխատած առաջին յերկու ժամերի համար, ու ամբողջ ժամյա տարիֆային վարձ՝ հետագա ամեն մի ժամվա համար:

§ 32.

Ի լրացում Աշ. Որ. Կող. 71 և 74 հող. վորոշումն է՝

Այն սարքավորումներն ու կարգավորումները, վորոնք պահանջում են աշխատանքը և չի մտցրված նորմայի ու գնահատության հաշիվների մեջ, ապա նրանց վճարը տրվում են համապատասխան կարգի ժամանակավոր վճարման հաշվով, յեթե աշխատավորի հետ չի կայացված վորոշ համաձայնութիւն:

§ 33.

Յերկարատե աշխատանքների դեպքում, վերջնական հաշիվը կատարվում են աշխատանքը ավարտելուց հետո, վորի ժամանակ աշխատողին ամեն ամիս միուս աշխատավորների հետ աշխատավարձ վճարելիս — տրվում են ավանս, նրա այդ ամսվա կատարած աշխատանքի տուրքին համապատասխան, բայց վոչ պակաս տարիֆային վարձից:

Իսկ վերջնական հաշիվի մաքրման ժամանակ աշխատավարձի գումարից պահվում են բոլոր կանխավճարներն ու պարբերական վճարներն:

Յեթե կանխավճարի գումարը ստանալիք աշխատավարձից ավելանում են, ապա բոլոր ավել վճարված գումարները պահվում են հետագայում ստանալիք աշխատավարձից այն հաշվով, վորպեսզի նրան տրվող վճարը $\frac{2}{3}$ տարիֆային կարգից ցած չլինի:

§ 34.

Յեթե սղելնի աշխատողից անկախ (մահ, հիվանդութիւն, պետական կամ պրոֆեսիոնալ աշխատանքի կանչվելը և այլ) կամ արմին խտրացիայի կարգադրությամբ պատվերը չի ավարտում, ապա կատարված աշխատանքը վարձատրվում են միջին աշխատավարձով, փաստացիորեն այդ աշխատանքի վրա գործադրված ժամանակի համար:

§ 35.

Յեթե առանց հարգելի պատճառների աշխատավորը հրաժարվում են գործը ավարտելուց (սկսելուց հետո) նրան վճարվում են միմիայն սղելնայա գնահատութիւն ու այն գումարի տարբերութիւնը, վորը վճարված են միուս աշխատավորին այդ գործը ավարտելու համար, բայց վոչ մի դեպքում, վոչ պակաս աշխատավորի տարիֆային կարգից:

§ 36.

Այն գործը, վորը անպետք են գտնվում, բայց վոչ բանվորի հանցանքով, վճարվում են նրա վրա գործադրած բոլոր ժամանակի համար ըստ վորոշված պայմանական գնահատության:

Այն գործը, վորը անպետք են գտնվում, աշխատավորի պատճառով, վարձատրվում են տարիֆային կարգի $\frac{2}{3}$ նրա վրա կորցրած ամբողջ ժամանակի համար:

Ծանոթութիւն. — Նման դեպքերում վարձատրութիւն չափը պետք են հաստատեն ԳԿՀ-ն:

§ 37.

Վորակյալ բանվորական ցեխերը, վորտեղ կատարված աշխատանքները չափավորման չեն յենթարկվում (ինստրումենտալնի, մոդելնի) նուշնպես և ցեխերի ու գործարանների այն ոժանդակիչ բանվորները, վորոնք իրենց ինտենսիվ աշխատանքով զարկ են տալիս սղելնայա (սղելչիկ) աշխատողների արտադրության և այն դեպքում, յեթե հաջող ե կատարվում իրենց հանձնված աշխատանքը և յեթե նրանք չեն աշխատում սղելնի ձևով, ստանում են լրացուցիչ վարձ, նայած իրենց աշխատանքի չափին ու վորակին:

Բանվորները	9—10	կարգի	—	90%—100%
»	8	»	—	80%
»	7	»	—	75%
»	6—5	»	—	70%
»	4—3	»	—	50—60%

Ցեխին, արհեստանոցին կամ գործարանին ծառայող սղելչիկները ավել (պրիրաբոտսկ) աշխատանքի միջին տոկոսից:

§ 38.

Արտաժամյա այն աշխատանքների համար, վորոնք չի կարելի հաշվի առնել, տոկոսային հավելումը (կոմպենսացիան) թույլ ե տրվում բացառիկ դեպքերում այն պաշտոնների համար, վորոնց ցուցակը կըցված ե Խայս պայմանագրին (Հավել. № 7):

Պաշտոնների կոմպենսացիայի սահմանը վորոշվում ե Ազնավթի ու Միության համաձայնությամբ:

Կոմպենսացիայի չափը, վճոված սահմաններում, վորոշում ե ադմինիստրացիան, նայած թե ինչ չափով ե ծանրաբեռնված աշխատանքով այն անձնավորությունը, վորին կոմպենսացիա ե տրվում:

Միության ու Ազնավթի համաձայնությամբ վորոշված սահմաններում, կոմպենսացիայի չափի մասին բոլոր վեճերը վճռում ե ԳԿՀ-ն:

Ծանոթություն.— 1) Կոմպենսացիա ստացող ծառայողների աշխատանքները հանգստյան որերին և հանգստյան որերի նախորդակին 6 ժամից ավել, հաշվվում ե առանձին ու վարձատրվում վորպես արտաժամյա կրկնակի չափով:

2) Կոմպենսացիա ստացող բանվորների ու ներքին կարգի պերսոնալի աշխատանքները հանգստյան որերին, դեկրետով վորոշված տոների ու հանգստյան որերի և դեկր. վորոշված տոների նախորդակին—հաշվում ե առանձին ու վարձատրվում վորպես արտաժամյա, կրկնակի չափով:

3) Համաձայն 1 և 2 կետերի, կոմպենսացիայի վորոշված տոկոսը հաշվվում ե գումարի վրա, վորը ըստ տարիքի տրվում ե միայն այն որերի համար, յերը արտաժամյա վարձատրության առանձին հաշիվ չի կատարվում:

§ 39.

Ադմինիստրատիվ-տեխնիքական ու գրասենյակային բարձր վորակի պերսոնալին՝ միության դիտությամբ, թույլ ե տրվում վճարել բացի իրենց տարիֆային վարձից նաև լրացուցիչ վարձատրություն

(սպեցնադրավկա): Լրացուցիչ վարձատրութիւն ստանալու իրավունք ունեն միայն 14-րդ տարեֆաշին կարգից վոչ պակաս ստացողները:

§ 40.

Այն բանավորներն ու ներքին կարգի պերսոնալը, վորը չի աշխատում պայմանական վարձատրութեամբ (սպեյնո), ժամապահը (վախտենի) առանց պողվախտենու չի ստանում կոմպենսացիա կամ պրեմիալնի — ամեն ամիս վերջնական հաշվի մաքրման ժամանակ ստանում է ամսվա աշխատավարձից բացի, լրացուցիչ անփոփոխ ավելացումն (տվյորդայա նադբավկա) համաձայն այս պայմոնագրին կցված № 8 հավելման:

Ծանոթութուն. Անփոփոխ ավելացումն (տվյորդայա նադբավկա) իր ուշժը պահպանում է մինչև 1927 թ. հոկտեմբերի 1-ը:

Մ Ա Ս V.

Ա Ր Ձ Ա Կ Ո Ի Ր Դ Ն Ե Ր Ը

Ի լրացում Ա.Ճ. Որ. Կոդ. 91, 114-ից մինչ 120 հոդվածներին

§ 41.

Բոլոր աշխատավորներին, վորոնք Ազնավթի հիմնարկութեաններում անընդհատ աշխատել են $5\frac{1}{2}$ ամսից վոչ պակաս, Ազնավթը պարտավոր է տալ 1 անգամ տարվա ընթացքում հերթական արձակուրդ (ա) որավարձ ստացողներին — յերկու շաբաթվա բ) ամսավարձ ստացողներին — կես ամսվա: 18 տարեկանի չը-

հասած աշխատավորներին արձակուրդ է տրվում 1 ամսով:

Ծանոթութուն. Արտադրութեան պայմանների համաձայն, հիմնարկութեան ազմինիստրացիան կարող է արձակուրդ տալ $5\frac{1}{2}$ ամիս աշխատելուց առաջ, Գիչ-ի համաձայնութեամբ:

§ 42.

Աշխատավորներին իրավունք է տրվում, հավաքել իրենց արձակուրդը, բայց յերկու տարուց վոչ ավել և հավաքած արձակուրդով կարելի է ոգտվել 1 տ. $5\frac{1}{2}$ ամիս անընդհատ ծառայութեանից հետո:

Ծանոթութուն. — Իր արձակուրդը հավաքել ցանկացող աշխատավորը, հայտնում է ազմինիստացիային ներկա հիմնարկութեան արձակուրդներին հերթի մասին Գիչ-ի վորոշումը հայտարարելու ժամանակ:

§ 43.

Այն աշխատավորները վորոնք շարունակ աշխատում են առանձնապես փաստակար պայմաններում, հերթական արձակուրդի հետ միաժամանակ ստանում են նաև լրացուցիչ կես ամսվա կամ յերկու շաբաթվա արձակուրդ, համաձայն ներկա պայմանների § 41: Վնասակար արհեստների ցուցակը կցված է այս պայմանագրին (Հավել. № 9):

Ծանոթութուն. — Այն աշխատավորները, վորոնք աշխատել են փաստակար հիմնարկութեաններում (արտադրութեաններում) $5\frac{1}{2}$ ամսից պա-

կաս ու փոխադրվել են նորմալ պայմաններում աշխատելու, նույնպես և նրանք, վորոնք աշխատել են ֆնասակար հիմնարկութուններում ընդմիջումներով, վորը առաջ և յեկել աշխատավորին տեղափոխելուց նորմալ պայմաններում աշխատելու, այդպիսիներին լրացուցիչ արձակուրդ և տրվում համեմատական չափով, հաշվելով մեկ ուր արձակուրդ, մեկ լրիվ ամիս ֆնասակար հիմնարկութուններում աշխատելու համար:

§ 44.

Արձակուրդի ոգտագործելու ժամանակը, կարգը և հերթը վորոշում և ադմինիստրացիան կոմիտեի հետ ու հաստատում և Գեչ-ն:

Արձակուրդի ժամանակը վճարում և Ազնավթը, մինչև արձակուրդի սկսվելը, հաշվի առնելով աշխատավորի միջին աշխատավարձը և արձակուրդի տեղում լինելը:

Ծանոթություն 1) Հիվանդության պատճառով կամ սանատորիաներում բժշկվելու համար վորոշված կարգով աշխատավորին արձակուրդ տալը—հերթական կամ լրացուցիչ արձակուրդի հաշվի մեջ չի մտնում:

2) Անչափահասներին մինչև 18 տարեկանը, արձակուրդ և տրվում մայիս 15-ի ու հոկտեմբեր 15-ի միջև:

§ 45.

Յեթե իր հերթական արձակուրդին աշխատավորը գնում և Բագվի սահմաններից դուրս, ապա Ազ-

նավթը տալիս և նրան յերկու տարին մեկ անգամ ճանապարհորդական տոմս կամ դրամական նպաստ, փաստացի ճանապարհածախքի չափով, բայց վոչ ավել քան արժե 1000 վերստ յերկաթուղով կամ 1500 վերստ ջրով, մի ուղղությամբ (կոնեց) ճանապարհորդության համար Հ. Ս. Մ-ի սահմաններում:

Ծանոթություն.—ա) Այդ նպաստով ոգտվում են այն աշխատավորները, վորոնք ստանում են 12-րդ տարիֆային կարգից վոչ ավել:

բ) Այն աշխատավորը, վորը ճանապարհորդության համար փող և ստանում պարտավոր և ներկայացնել իր ճանապարհորդության ապացույցը, հակառակ դեպքում ճանապարհորդության համար արված փողը կպահվի նրա աշխատավարձից:

§ 46.

Յեթե աշխատավորը իր արձակուրդը ոգտագործելու համար գնում և Բագվի սահմաններից ու նրա շրջաններից դուրս, ապա փաստացիորեն ճանապարհին գտնվելու ժամանակը,—բայց յերկու շաբաթից վոչ ավել,—արձակուրդի հաշվի մեջ չի մտնում, բայց այդ ժամանակի համար վարձատրություն չի ստանում:

§ 47.

§ 46 նախատեսված ժամանակից ուշ վերադառնալը արձակուրդից, առանց հարգելի պատճառների, Ազնավթին իրավունք և տալիս գործից արձակել ուշացողին, առանց նախազգուշացման ու առանց վիճադնոյ նպաստի, ծառայության վերջը հաշվելով արձակուրդի վերջին օրը:

Ծանոթութիւն.— Վերադարձի համար արգելք հանդիսացող հարգելի պատճառներ են համարվում՝

ա) հիվանդութիւնը — տեղական Առողջ. Բաժնի վկայութեամբ:

բ) Աղետը, վորը հնարավորութիւն չի տվել աշխատավորին իր ժամանակին ուղևորվել — տեղական իշխանութեան որդանների վկայութեամբ:

գ) Ձերբակալումը կամ դատի կանչվելը — համապատասխան փաստաթղթերով վավերացված և այլն...

§ 48.

Հարգելի պատճառներով ուշացողը, բայց վոչ ավել քան յերկու ամսով, իր աշխատանքի իրավունքից չի զրկվում, բայց ուշացած ժամանակի համար վարձ չի ստանում:

§ 49.

Գործից արձակելու դեպքում, չնայած պատճառներին, աշխատավորին, վորին գործից արձակման ժամանակ իրավունք ունի հերթական արձակուրդի ($5\frac{1}{2}$ ամիս անընդհատ աշխատանք) տրվում է կոմպենսացիա չդրժարած արձակուրդի համար՝ հաշվի առնելով միջին աշխատավարձը և հասանելիք արձակուրդի տեղութիւնը, համաձայն ներկա պայմանագրի §§ 41 և 43-ի:

Այն դեպքում, յերբ գործից արձակվողներին — հերթական արձակուրդ ստանալու ժամանակը չի լրացել, տրվում է կոմպենսացիա, նրանց աշխատանքի համեմատական չափով. մի որվա միջին աշխատավարձը,

ամեն մի աշխատած ամսի համար՝ յերկու շաբաթվա կամ կես ամսով արձակուրդի իրավունքով ոգտվելու դեպքում, և յերկու որվա միջին աշխատավարձ՝ մեկ ամսա կամ 4 շաբաթվա արձակուրդի իրավունքով ոգտվելու դեպքում:

Ծանոթութիւն.— Յերկու շաբաթից պակաս աշխատող ու գործից արձակվողը, չդրժարած արձակուրդի համար, կոմպենսացիա ստանալու իրավունք չունի:

Մ Ա Ս Վ I.

ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱՆՔԸ

§ 50.

Աշխատավորներին, վորոնք ուղարկվում են շրջանից շրջան ժամանակավոր աշխատանքներ կատարելու համար հանքային մշակման սահմաններում կամ գործարանային շրջանը, Ազնալթը պարտավոր է տալ ճանապարհածախք մինչև աշխատանքի վայրը գնալու ու վերադառնալու համար:

Յեթե այդ աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է ֆնալ մեկ որից ավել, նույնպես և մի վոր և է շրջանից Ապշերոնի թերակղզու սահմաններում, հանքերի հետախուզման վայր ուղարկելու, բացի ճանապարհածախսից տրվում է նաև սուտոնի, տարիֆային կարգի որավարձի կես չափով, ամեն մի գործուղման որի համար:

Ծանոթութիւն. Առանձին շրջաններ են համարվում՝ 1) Բ.-Հեյբաթ 2) Քաղաքի շրջ. 3) Փարգործարանային շրջ. 4) Սուրախանու շրջ. 5) Բի-

հաղագու շրջ. 6) Շուբանի 7) Լենինյան շրջ. 8) Զբխ 9) Արտյոմի կղզի 10) Ղալա 11) Պուտի 12) Մարգարյան-Բզովսի 13) Ղարադաղ ու առանձին հետախուզման հրապարակներ:

բ) Սուտոչնիներ չեն տրվում՝ ա) այն դեպքում, յերբ շրջանից շրջան գնալը մշտնում է աշխատավորի մշտական պարտականությունների մեջ: բ) Յեթե գործուղվման վայրը, գործուղվողի մշտական բնակության տեղն է:

գ) Անչափահասները մինչև 18 տարեկանը ու մանուկներին կրճքով կերակրող կանայք չեն կարող գործուղվել, ուր ել վոր լինի նրանց մշտական ապրելու վայրը, առանց իրենց համաձայնության:

§ 51.

Ապշերոնյան թերակղզուց դուրս գործուղման դեպքում, աշխատավորները ամբողջ գործուղվման ընթացքում պահպանում են իրենց միջին աշխատավարձը և ստանում գործուղվման հետ կապված ծախքերը 1927 թ. հունվարի 14 ձ. խ. Ս. Մ. Կենտ. Գործ. Կոմ. և Ժ. Կ. խ. վորոշման համաձայն «Պաշտոնական գործուղումների մասին»:

Ծանոթություն.—Անչափահասները մինչև 18 տարեկան և մանուկներին կրճքով կերակրող կանայք չեն կարող գործուղվել, ուր ել վոր լինի նրանց մշտական մշտական ապրելու վայրը առանց իրենց համաձայնության:

§ 52.

Յեթե աշխատավորը իր մշտական ապրելու վայրից 800 սաժեն հեռու և ապրում, ապա Ապշավթը նրան պարտավոր է ձրի տոմս տալ, գոյություն ունեցող հաղորդակցության միջոցների համար (ելեքտրաքարշ, ելեքտրական յերկաթուղի, հանքային յերկաթուղի, ավտոբուս, բարկաս և այլն) փաստացի գործի դուրս գալու սրերի հաշվով, բայց վոչ ավել մեկ անգամից ամեն մի սրացույցային գործի դուրս գալու սրին բոլոր աշխատավորների համար, և վոչ ավել 42 անգամ ամսվա ընթացքում գործի դուրս գալուց 6 ժամյա վախտնի աշխատավորի համար:

1) Լենինյան, Սուբախանու և Բինադագու շրջանում աշխատողները ստանում են ճանապարհածախք— ա) Այն դեպքում, յեթե ապրում են այդ շրջաններից մեկում ու աշխատում են ուրիշ շրջանում հանքային յերկաթուղիների:

բ) Ստ. Բադինի ավանում, Բյուլ-Բյուլի կամ Ամիրաշան գյուղում ապրելու դեպքում— ելեքտրական յերկաթուղու և հանքային յերկաթուղիների:

գ) Քաղաքում կամ գործարանային շրջանում ապրելու դեպքում յերկաթուղային գծերի, բարկասի կամ ելեքտրաքարշի, յեթե յերկաթուղային կայանից մինչ բնակավայրը 800 սաժենից ավել է:

2) Բ.-Հեյրաթի շրջանում աշխատողները ստանում են ճանապարհածախք՝

ա) Հանքային կամ գործարանային շրջանում ապրելու դեպքում— հանքային յերկաթուղիների կամ յերկաթուղու, ելեքտրաքարշի կամ բարկասի, յեթե

վերջինը յերկաթուղու կայանից կամ նավահանգստից մինչև աշխատավայրը 800 սաժենից ավել է:

բ) Քաղաքում ապրելու զեպքում — հանքային յերկաթուղիներին, բարկասի կամ ելեքտրաքարշի յեթեքնակութեան վայրից մինչև աշխատավայրը 800 սաժենից ավել է:

3) Ֆար-գործարանային շրջանում աշխատողները ստանում են ճանապարհածախք՝

ա) Քաղաքում ապրելու զեպքում — բարկասի կամ ելեքտրաքարշի, յեթեքնակութեան վայրից մինչև աշխատավայրը 800 սաժենից ավել է:

բ) Հանքային շրջանում ապրելու զեպքում — հանքային յերկաթուղիներին և (ելեքտրաքարշի) յեթեքնակութեան վայրից մինչև աշխատավայրը 800 սաժենից ավել է:

գ) Սե Քաղաքում ապրելու և Սե Քաղաքում աշխատելու զեպքում կամ ընդհանրապես — ելեքտրաքարշի, յեթեքնակութեան վայրից մինչև աշխատավայրը 800 սաժենից ավել է:

Ծանոթություն՝ 1) Տոմսակները տրվում են միայն աշխատավարձերին և բացառապես գործի գնալու ու գործից վերադառնալու համար:

2) Յեթեքնակութեան վայրից մինչև աշխատավայրը մի քանի ելեքտրաքարշի գծեր են անցնում, ապա աշխատավարձերն տրվում է բոլոր գծերի տոմսակներ միայն այն զեպքում, յեթե այդ գծերից ամեն մեկով նա ստիպված է գնալ 800 սաժենից ավել:

3) Յեթե գոյութիւն ունի յերկու ելեքտրաքարշի դիմ և աշխատավարձ իրավունք ունի

ստանալու նրանցից մեկի տոմսը, ապա նա ստանում է այն գծի տոմսը, վորը ավելի հարմար է գտնում իրեն համար:

4) Քաղաքի գծով ճանապարհածախք ստանում են մինչև 10 կարգ ստացող աշխատավորները:

5) Տոմսերը տրվում են ամեն ամիս, ամսի սկզբին:

Մ Ա Ս VII.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԵՐՆ ՈՒ ՀԱՆԳԻՍՏԸ.

Ի լրացում ԱԵ. Որ. Կադ. 94-ից մինչ 96-ը, 98-ից մինչ 102-ը, 109-ից մինչ 113-ը, 134-ից մինչ 136-ը վարուվում է՝

§ 53.

Աշխատավորի առողջութեան համար, Ապրիլի 1-ի առանձնապես ֆլատակար ձեռնարկութեան հետևում, նորմալ բանվորական որվա տեղութեանը կրճատվում է այն գործերի պրոֆեսիաների համար, վորոնց ցուցակը կցված է այս պայմանագրին (հավել. № 11):

§ 54.

Գիշերվա աշխատանքի ժամանակը կրճատվում է 1 ժամով: Վախտենի աշխատավորներին գիշերվա աշխատանքներին տեղութեանը հավասարեցնում է ցերեկվա աշխատանքներին ժամերին և այդ զեպքում գիշերվա ամեն մի աշխատած ժամի վարձատրութեանը համապատասխան կերպով ավելացվում է (1 գիշերվա ժամի համար վճարվում է վորպես ⁸/₇ ցերեկվա ժամ,

նորմալ 8 ժամյա բանվորական որվա դեպքում և վորպես 6/5 — 6 ժամյա որվա դեպքում)։

Ծանոթություն.— Գիշերային ժամանակ ե համարվում՝ յերեկոյան ժամը 10-ից մինչև առավոտվա 6.ը։

§ 55.

Ամսվա սովորական օրերին, բանվորները ու ծառայողների գործի դուրս չը գալը—համարվում է պրոպուս։ Սովորական օրերին գործի դուրս չելած բանվորին կամ ծառայողին յեթե աշխատանք չի տրվում—ապա այդ պրոպուս չի կարող համարվել և այդ օրերի համար նրանց վարձատրություն տրվում է։

Ծանոթություն.— Հանքային յերկաթուղային վարչության հաղորդակցության ու տյագային աշխատավորների գործի դուրս գալու քանակը ու վարձատրության չափը ղեկավարվում է աշխատանքների սյունյակով (գրաֆիկա բաբոտ)։

§ 56.

Հանքային յերկաթուղային վարչության աշխատավորների աշխատանքի ու հանգստյան ժամերը ղեկավարվում են այս պայմանագրին կցված համաձայնությամբ (հավելում № 9)։

Մ Ա Ս V III.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ի լրացում Աշ. Որ. Կող. 86, 103—108, 128—134, 138—145 հոդվածների վերոշվում է։

§ 57.

Արգելվում են սխտեմատիկ արտաժամյա աշխատանքներ—նրանք թույլ են տրվում բացառիկ դեպքերում, վորպես ժամանակավոր միջոց՝ միության համաձայնությամբ ու Ա. Ս. Մ. Աշխ. Ժողկոմի որոշանքների վավերացմամբ։

§ 58.

Այն աշխատավորներին, վորոնց աշխատանքները ֆառակար աղբեցություն են թողնում աշխատավորի վրա, Ազնավթը պետք է տա ուժեղացրած սնունդ (ուսիլեննոս) կամ հատկապես չեղօքացնող սնունդ, այն պրոֆեսսիաների համար, վորոնց ցուցակը կցված է այս պայմանագրին (հավելում № 13)։ Այդ բոլորը դրամական կոմպենսացիայով փոխարինելը թույլ չի տրվում։

§ 59.

Ծանոթություն.— Սպեց հագուստը համարվում է հիմնարկության սեփականություն ու նրա հանձնելը աշխատավորին, նշանակվում է հաշվեգրքույի մեջ (ռասչոտնայա կնիժկա)։

§ 60.

Այն դեպքում, յեթե աշխատավորի սեփական զգեստը, կոշիկը, փչանում է, կամ վոչնչանում է (հրդեհ, շատրվան և այլն), այդպիսի դեպքերի ժամանակ աշխատավորը ստանում է կոմպենսացիա, իրերով, կամ դրամով վճարվում է նրանց փաստացի արժեքը։

Կոմպենսացիա վճարելու դեպքում, փչացած իրերը հանձնվում են հիմնարկութեանը: Փոխարինելու անհրաժեշտութեանը ու կոմպենսացիայի չափը վորոշում է ԳԿՀ-ն:

§ 61.

Այն բանվորները, վորոնք աշխատում են առանձնապես կեղտոտ աշխատանքների վրա, ստանում են սպեց-սապոն: Այն աշխատանքների ու պրոֆեսիաների ցուցակը, վորոնք պետք է ստանան սպեց-սապոն, վորոշվում է Ազնավթի ու միութեան համաձայնութեամբ, իսկ քանակը ըստ Աշխատողի վորոշված չափերի:

§ 62.

Ազնավթի այն հիմնարկութեաններում ու ձեռնարկներում, ուր այդ անհրաժեշտ է, պետք է կառուցվեն բավական չափով լվացարաններ փակ շենքերում ու պետք է տրվեն սապոն, ջուր ու մաքուր սրբիչներ, նույնպես և յեռացրած ջուր տակառով, բավականաչափ սառեցրած: Աշխատավայրերում բավական չափով պետք է կառուցվեն առողջապահութեան պահանջներին համապատասխանող արտաքնոցներ, առանձին՝ տղամարդկանց ու կանանց համար:

§ 63.

Ազնավթը հատկացնում է բանվորներին ու ծառայողներին սանիտարա-տեխնիքական պահանջներին համապատասխան շենք, սնունդ ընդունելու համար:

§ 65.

Ազնավթի բոլոր ձեռնարկներում, աչքի ընկնող տեղ պետք է կախված լինեն արտադրական սանիտարային ու ապահովութեան տեխնիկայի կանոններն ու հրահանգները, նույնպես և պլակատներ, տրամադրված ու դժբախտութեան դեպքերում առաջին ոգնութեան հասցնելու մասին:

§ 66.

Աշխատավորի մահվան դեպքում, նրա ընտանիքը, բացի մինչև իր մահվան որը աշխատավորին հասնող աշխատավարձից, ստանում է նաև նպաստ աշխատած տարիների համար համաձայն ներկա պայմանագրի § 10 «2» կետի—վիսադնոյ նպաստ աշխատավորի կես ամսվա տարիֆային կարգի չափով և բացի դրանից նրա յերկու ամսվա տարիֆային վարձը, բայց վոչ պակաս վեցյերորդ կարգի յերկու վարձից: Յեթե աշխատավորի մահը առաջ է եկել աշխատանքի ժամանակ ստացած հաշմութեանից, կամ պատահել է նրա պաշտոնական պարտականութեանները կատարելու ժամանակ, ապա լրացւցիչ վարձատրութեանը տրվում է 4 ամսվա տարիֆային վարձի չափով, բայց վոչ պակաս 6-րդ կարգի աշխատավորի 4 ամսվա առճիկից:

Ծանոթութիւն. — Այդ նպաստը տրվում է Սոց. Ապահով. տված նպաստից անկախ:

Մ Ա Ս IX.

ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Ի լրացում Աւիս. Որ. Կող. 75, 105, 121-ից մինչ 128 հոդվածների վերջում ե.

§ 67.

Վորակյալ ույժերի պակասը նորմալ չափերով լրացնելու նպատակով մինչև 1927 թ. Հունվարի 1-ը Ազնավթի ձեռնարկների ու Գորպրոմուշի ուսումնարաններում գտնվող անչափահասների ու աշակերտների թիվը պահպանվում է մինչև այս պայմանագրի ժամկետի վերջնապարբերակը:

Ծանոթություն.—1. Արտադրության շտատների կրճատման դեպքում անչափահասների ու չափահաս բանվորների միջև վորոշված թիվը վոշ մի փոփոխության չի յենթարկվում: Այն աշակերտները, վորոնք 2 տարուց ավել սովորում են, շտատների կրճատման ժամանակ չեն կարող արձակվել:

2. Գորպրոմուշի ուսումնարանների աշակերտները մտնում են անչափահասների բրոնի մեջ մինչև ուսման ավարտելը:

3. Բրոնից դուրս բերված աշակերտները—անչափահասները, ձեռնարկություններից արձակման չեն յենթարկվում ու մտցվում են ձեռնարկների մշտական շտաբի մեջ:

§ 68.

Ձեռնարկություններում, կամ Գորպրոմուշի ուսումնարաններում աշխատող անչափահասների և աշա-

կերտների սկզբնական կարգը վորոշվում է 1-ին կարգից: Անչափահասներն ու աշակերտները 1 տարի սովորելուց ու Միության ու Ազնավթի հաստատված ծրագրով ու հրահանգով համապատասխան քննություն տալուց հետո փոխադրվում են յերկրորդ կարգը: Քննության ծրագիրն ու հրահանգը կցված է այս պայմանագրին (Հավելում № 15, 16):

Հետագայում կարգից կարգ տեղափոխելը կատարվում է ամեն մի 6 ամսից հետո, նույն ծրագրով ու հրահանգով:

Ծանոթություն.—Առանձին բացառիկ դեպքերում, քննությունը կարող է կատարվել և վորոշված ժամանակից առաջ:

§ 69.

Աշակերտ ֆալու ժամանակը, ձեռնարկությունների մեջ սովորելու դեպքում բարձր վորակի համար վորոշվում է 4 տարուց վոշ ավել, իսկ Գորպրոմուշի ուսումնարաններում սովորելու դեպքում—3 տարի:

Ծանոթություն.—Աշակերտին մեկ ձեռնարկությունից մյուսը տեղափոխելու դեպքում առաջին ձեռնարկում նրա սովորած ժամանակը մտցվում է հաշվի մեջ:

§ 70.

Անչափահասների աշխատավարձը կրճատված բանվորական որվա համար վճարվում է, վորպես համապատասխան կարգի աշխատավորի լրիվ բանվորական որվա վարձը:

Մ Ս Ս X I.

ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

§ 76.

Աշխատանքից չազատված կոմիտեի անդամները հարկավոր յեղած ժամանակ պետք է ազատվեն աշխատանքից, ամեն մի առանձին ղեպքում ձեռնարկության ազմիրնիստրացիային հայտնելով:

§ 77.

Ազնավթը պարտավորվում է սկզբնական (պերվիշնի) միացյալ կոմիտեների ու միության կենտրոնական վարչության համար ձրիաբար կահավորված շենքեր հատկացնել, վառելիքով ու լուսավորությամբ, ուղղակի հեռախոսներ միացյալ կոմիտեների ու տեխնիկապես հնարավոր չափերով, տնտեսական մասերի կոմիտատորների հետ կապված հեռախոսներ առաջնական կոմիտեներին:

§ 78.

Կոմիտեները պահելու համար Ազնավթը ամեն ամիս վճարում է ձեռնարկներում վճարված աշխատավարձի գումարից մեկ և իննը տասյերորդական (1,9) տոկոս. վճարը տրվում է միացյալ կոմիտեներին:

§ 79.

Պրոֆեսսիոնալ, կուսակցական, խորհրդային ու կոոպերատիվային օրգանները ժողովի կանչված միության անդամներին Ազնավթը ամեն ժամանակ ազատում է գործից: Կորցրած ժամանակի վարձը ամեն անգամ կանչվելը հաստատող փաստաթուղթ ներկայա-

դնելուց հետո վճարում է Ազնավթը միջին աշխատավարձի հաշվով, բայց վոչ պակաս նրա տարեֆային կարգից:

§ 80.

Այս պայմանագիրը կազմվում է յերեք օրինակից յերկու կողմերի ստորագրությամբ և վորոշված կարգով վավերացվում:

§ 81.

Այս պայմանագիրը պետք է տպագրվի Ազնավթի հաշվին ու հանձնվի միությանը 9000 օրինակ ուսուրեն լեզ. 3500 օրինակ թուրքերեն լեզ. և 1000 օր. հայերեն լեզվով. նույնպես և պլակատի ձևով հազարական օրինակ ամեն մի լեզվով:

«Մ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն»

Վարչության նախագահ՝ Ս. Գուսին
Վարչության քարտուղար՝ Ո. Ա. Զեյնալով
Տեղ-ի վարիչ՝ Պ. Մեհկով.

«Ա. Զ. Ն. Ա. Վ. Թ»

Վարչության նախագահ՝ Մ. Բաբինով
Վարչության անդամներ՝ Լավրենցյով յեվ Ռիսկին
Ազնավթի Աշխ. Եկոն. Բաժնի Վարիչ՝ Բ. Շեյնին.

Հավաքական պայմանագրի § 2-ի
Հավելում № 1

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ-ՏԵԽՆԻԲԱԿԱՆ ՊԵՐՍՈՆԱԼԻ ՈՒ ԳՐԱ-
ՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԲԱՐՁՐ-ՎՈՐԱԿՅԱԼ ՊԵՐՍՈՆԱԼԻ ԱՆՁԱՆՅ
ՅՈՒՅԱԿԸ, ՎՈՐՈՆՅ ԲԱՆՎՈՐՆԵՐ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՈՒ ԳՈՐԾԻՅ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ Ե
ՏՐՎՈՒՄ.

1. Ազնավթի վարչության նախագահ 1
2. Ազնավթի վարչության Փոխնախագահ 1
3. Վարչության Անդամ, գլխ. Տեխնիք. Տեսուչ . . . 1
4. Վարչության Անդամ, Տեխնաբի Տեսուչ 1
5. Վարչության Անդամ, ֆինանսական բաժնի
վարիչ 1
6. Նավթգազ գործարանների վարչության Դի-
րեկտոր 1
7. Ապրանքային վարչության Դիրեկտոր 1
8. Գլխավոր Հաշվապահ 1
9. Ազնավթի Դործերի վարիչ 1
10. Հանքային գրուպաների կառավարիչներ 6
11. Դործարանային գրուպաների կառավարիչներ 3
12. Հորափորության Գլխավոր գրասենյակի կա-
ռավարիչ 1

13. Սուբախանու, Բիրի-Հեյբաթի և Բինադադու
Հորափորության գրասենյակների կառավա-
րիչներ 3
14. Հանքային յերկաթուղիների Պետ 1
15. Ավտո-Տրանսպորտի կառավարիչ 1

Ը ն դ ա մ ե ն ք 24

«Մ Ի Ո Ի Թ Յ Ո Ի Ն»

Վարչության նախագահ՝ Ս. Ա. ԳՈՒՏԻՆ.
Վարչության Քարտուղար՝ Ո. Ա. ԶԵՑՆԱԼՈՎ.
Միության Տեղ-ի վարիչ Պ. ՄԵՇԿՈՎ.

« Ա Ձ Ն Ա Վ Թ »

Վարչության նախագահ՝ Մ. ԲԱՐԻՆՈՎ.
Վարչ. Անդամ ՅԱ. ԼԱՎՐԵՆՏԵՎ, ՅԱ. ՐԻՍԿԻՆ.
Աշխատանքի եկոնումիկ Բաժնի վարիչ՝ Բ. ՇԵՑՆԻՆ.

Հավաքական պայմանագրի § 7-ի
Հավելում № 2.

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԳՆԱՀԱՏՈՂ-ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՀԱՆՁ-
ՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

§ 1. Հավաքական պայմանագիրը ու Ազնավթի
և Միության միջև կնքված լրացուցիչ համաձայնու-
թյունները կյանքի մեջ անցկացնելու ու այդ պայ-
մանների գործադրման հետ կապված վեճերն ու կոն-
ֆլիկտները վճռելու համար, Ազնավթի ձեռնարկներում
կազմակերպվում են Գնահատող-Կոնֆլիկտային Հանձ-
նաժողովներ (Գ.Կ.Հ.):

§ 2. Գ.Կ.Հ. կազմակերպվում են հետևյալ ձեռ-
նարկություններում:

Բ ա լ ա խ ա ն ու շ ը ա ն ու մ.

1. Հանքային գրուպ. Վարչության կից
2. Զինովյեվի ան. մեխանիքական արհեստանոցի կից
3. Շինարարական բաժնի կից
4. Ապրանքային Վարչության կից
5. 10-րդ հանքին կից (Սորազան)

Ս ա բ ու ն չ ու շ ը ա ն ու մ

6. Հանքային գրուպ. Վարչության կից
7. Բուդյոննու ան. մեխանիկ. արհ. »
8. Տրոցկու ան. » » 101 հողամաս.
9. Տուրքինային հորափորության բաժնի կից
10. Շինարարական բաժնի կից

Ռ ա մ ա ն ու շ ը ա ն ու մ

11. Հանքային գրուպ. Վարչության կից
12. Ստալինի ան. մեխ. արհեստանոցի կից
13. Շինարարական բաժնի կից

Լեկինյան շրջանի հորափորության բաժնում

14. Գլխավոր գրասենյակի Տնտեսբաժնի կից
15. Բալախանու գրասենյակի (մեծ Հեղեմեբեր) մեխ.
արհեստ. հետ) կից
16. Լին Սաբունչու գրասենյակի (Իլիչի ան. մեխ.
արհեստ. հետ) կից
17. 11-րդ Սաբունչու գործարանի (Ֆրունզեի ան. մեխ.
արհեստ.) կից
18. Բամանու գործարանի (Կարմիր Պրոլետարիի մեխ.
արհեստ. հետ) կից
19. Բիկովի ան. Կենտրոնական մեխանիկ. արհեստա-
նոցի կից
20. Իզոլյացիայի բաժնի (Ենգելսի ան. մեխ. արհեստ
հետ) կից

Ս ու ռ ա խ ա ն ու շ ը ա ն ու մ

21. Հանքերի գրուպ. Վարչության կից
22. «Ղալա» հանքի կից
23. Մեխանիկայի բաժնի կից
24. Լին մեխանիկական արհեստանոցի կից
25. Շինարարական բաժնի կից
26. Ֆրունզեի ան. մեխանիկ. արհեստանոցի կից

Բ ի բ ի - Հ յ բ ա թ ի շ ը ա ն ու մ

27. Հանքային գրուպ. Վարչության կից
28. 10-րդ հանքի (Արտեյոմի կղզի) կից

29. Հոկտեմբերյան Հեղափոխութեան ան. կենտրոն.
մեխանիկական արհեստանոցի կից
30. Բուխտայի № 3 մեխանիկ. արհեստանոցի կից
31. Շինարարական գրասենյակի կից
32. Հորափորական բաժնի կից
33. Հորափորական բաժնի II-րդ մեխանիկական ար-
հեստանոցի կից
34. Հետախուզական հորափորման բաժնի կից

Բ Ի Ն Ա Պ Ա Ղ Ո Ւ Ե Ր Ջ Ա Ն Ո Ւ Մ

35. Հանքային գրուպ. վարչութեան կից
36. Կենտրոնական մեխանիկ. արհեստանոցի կից
37. Հորափոր. բաժնի հորափոր. պարտիաների կից
38. Մեխանիկական արհեստանոցի և Հորափորման
Բաժնի Տնտեսբաժնի կից

Շ Ո Ւ Բ Ա Ն Ո Ւ Ե Ր Ջ Ա Ն Ո Ւ Մ

39. Վոլոդարսկու ան. 6-րդ նավթահանքի կից
40. Փութայի հետախուզման կից
41. Ղարադաղի հետախուզման կից

Ն Ա Վ Բ Ղ Տ Ո Ղ Գ Ո Ր Ժ Ա Ր Ա Ն Ն Ե Ր Ո Ւ Մ

42. Նավթգտող գործարանների վարչութեան կից
43. I-ին գրուպ. ռեմոնտային բաժնի կից
44. Գործարանների II-րդ գրուպայի կից
45. II-րդ գրուպ. ռեմոնտային բաժնի կից
46. Գործարանների III-րդ գրուպայի կից
47. Թթվածին-կարբիտային գործարանի կից
48. Ապրանքային վարչութեան կից

Ք Ա Պ Ա Ֆ Ի Ե Ր Ջ Ա Ն Ո Ւ Մ

49. Ազնավթի Գլխավոր Գրասենյակի կից
50. Ուտիլիզացիոն բաժնի կից

Տ Ր Ա Ն Ա Յ Ո Ր Տ Ի ՈՒ Տ Ե Խ Ս Ն Ա Ր Ի Կ Ի Կ

51. Հանքուղիների շարժի ծառայութեան ու վարչու-
թեան կից
52. Հանքուղիների ուղիի ծառայութեան կից
53. Զարբատի դեպոյի կից
54. Ազնավթի կենտրոնական գարաժի կից
55. Ավտո-րեմոնտային գործարանի կից
56. Ավտո-Տրանսպորտի Խճուղիի հոգամասի կից
57. Գլխավոր Պահեստի ու Ազնավթի Տեխնաբի կից

Խ Ա Ն Ղ Ե Լ Ա Ղ Ո Ւ Մ

58. Նավթի հետախուզման կից

Գ. Կ. Հ. - Ի ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐՐ

§ 3. Գ. Կ. Հ. - ն քննում ու հաստատում է ազմի-
նիստրացիայի առաջարկած արտադրութեան չափն ու
սղեյնի գնահատումը:

Ծանոթութեամբ. Արտադրութեան չափն ու
սղեյնի գնահատումները մշակում են Տեխնիկ.
Զափավորմ. որդանները, ձեռնարկութեան կամ
հիմնարկութեան ազմինիստրացիան ու ներկա-
յացվում է նրանց կողմից Գ. Կ. Հ. - ին՝ հաստատ-
ման համար:

§ 4. Գ.Կ.Հ.-ն կողմերի գլխավոր գեպքում քննում է ադմինիստրացիայի վորոշված պրոֆեսսիոնալ փորձի համապատասխան լինելը աշխատանքի ընդլայնման: Փորձը կատարելու կամ նոր աշխատանքի ընդունվողի քննությունը կամ բարձր կարգ անցնելու ցանկությունը քննություն յենթարկվողի աշխատանքներին հետևելը նույնպես և փորձի ու քննություն հետևանքների գնահատումը կատարում է բացառապես ադմինիստրացիան:

Ծանոթություն. Աշխատավորների վեճերը, վորոնք յենթարկվել են քննության կամ փորձի, նրանց բարձր կարգ տեղափոխելու համապատասխան լինելը պարզելու համար, վորոշում է Գ.Կ.Հ.-ն:

§ 5. Գ.Կ.Հ.-ն հաստատում է արձակուրդների կարգն ու հերթը:

§ 6. Գ.Կ.Հ.-ն ստուգում է ինչպես առանձին աշխատավորների, նույնպես և աշխատավորների խմբերին վճարված աշխատավարձի ճշտությունը՝ հանքվածի միջոցով նրանց արած գլխավոր գեպքում:

§ 7. Բոլոր վեճերը (կոնֆլիկտները), վորոնք առաջ են գալիս ձեռնարկություններում կամ հիմնարկություններում, հավաքական պայմանագրի, լրացուցիչ համաձայնությունների և կամ ներքին կանոնադրության առանձին կետերի գործադրման շուրջը, քննում ու վորոշում է Գ.Կ.Հ.-ն,

Ծանոթություն. Վեճերը—հավաքական պայմանագրի դեմ, նրա առանձին կետերի վերացման կամ նոր կետեր մտցնելու պահանջը, նույնպես

և կոնֆլիկտները, վորոնք առաջ են գալիս աշխատանքի և սոցիալ-ապահովության տրեքների խախտման հիման վրա—Գ.Կ.Հ.-ի քննություն յենթարկվում:

Գ.Կ.Հ.-ի Կ.Ս.Ձ.Մ.Ը,

§ 8. Գ.Կ.Հ.-ն կազմվում է հավասարության սկզբունքներով չորս անդամներից բաղկացած: Յերկու ներկայացուցիչ Միությունից և յերկու ներկայացուցիչ ձեռնարկությունից:

§ 9. Գ.Կ.Հ.-ի ներկայացուցիչները նշանակվում են կողմերը:

Ծանոթություն. Կողմերը ամեն ժամանակ կարող են հետ կանչել իրենց ներկայացուցիչներին, միաժամանակ նրանց փոխարինել ուրիշներով:

§ 10. Բանվորների ու ծառայողների կողմից Գ.Կ.Հ. անդամները (Գ.Կ.Հ.-ի բանվորական մասը) հաստատվում է համապատասխան Միացյալ Կոմիտեի կողմից ու կարող են հետ կանչվել միայն նրա համաձայնությամբ: Գործկոմի վերընտրության հետ դադարում է և նրանց կողմից ընտրված Գ.Կ.Հ.-ի անդամների լիազորությունը:

§ 11. Գ.Կ.Հ.-ի անդամների աշխատանքները տարվում են աշխատանքի ժամերին ու վարձատրվում Ազգային կողմից, նրանց միջին աշխատավարձի չափով:

§ 12. Գործավարություն համար Գ.Կ.Հ.-ն պետք

և ունենա տեխնիկական քարտուղար, վորին պետք է փարձատրի Ազնավթը:

§ 13. Գ.Կ.Հ.-ն չունի իր տեխնիկական կազմը ու իր կարիքների համար ոգտվում է ձեռնարկության կամ հիմնարկության կազմով:

ԳՈՐԾԻ ՔՆՆՄԱՆ ԿԱՐԳԸ Գ.Կ.Հ.-ՈՒՄ:

§ 14. Գ.Կ.Հ.-ի նիստերը կատարվում են հրապարակորեն:

Ծանոթութուն. Գ.Կ.Հ.-ի վորոշմամբ կարող են լինել փակ նիստեր,

§ 15. Գ.Կ.Հ.-ի նիստերը լինում են կարևորության չափով և ամեն կողմի ներկայացուցիչները պարտավոր են ներկայանալ նիստերին ըստ հակառակ կողմի պահանջի:

§ 16. Գ.Կ.Հ.-ին ուղված բոլոր հարցերը պետք է վճովեն վոչ ուշ քան 72 ժամից (3 սր) հաշվելով գործը հանձնաժողովին ուղղված օրից:

§ 17. Գ.Կ.Հ.-ն չունի մշտական նախագահ ու քարտուղար: Գ.Կ.Հ.-ի նիստերի ժամանակ կողմերի ներկայացուցիչները նախագահում ու քարտուղարի պարտականություններ են կատարում հերթով: Միևնույն նիստին չեն կարող նախագահն ու քարտուղարը միևնույն կողմից լինել:

§ 18. Գ.Կ.Հ.-ն քննում է Գործկոմի ու Գործկոմի միջոցով ուղղված դիմումները, իսկ ուր նրանք չլուրջ, լիազորների միջոցով, մի խումբ աշխատավորների

բի, առանձին աշխատավորի ու ադմինիստրացիայի դիմումները:

§ 19. Գ.Կ.Հ.-ի ամեն մի կողմը իրավունք ունի հրավիրել նիստերին տեղյակ անձանց, յեթե նույն իսկ այդպիսիները աշխատելիս չլինեն նույն ձեռնարկության կամ հիմնարկության մեջ:

Հրավիրված տեղյակ անձինք ոգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

§ 20. Գ.Կ.Հ.-ում հարցերը վճուրու համար, կողմերը (բանվորական մասն ու ադմինիստրացիայի ներկայացուցիչները) ունեն հավասար թվով ձայներ:

§ 21. Գ.Կ.Հ.-ում քննված բոլոր հարցերը համարվում են վճուրած, յեթե նրանց մասին միաձայն վորոշում է կայացված:

§ 22. Կողմերի համաձայնությամբ կայացված Գ.Կ.Հ.-ի վորոշումները, պարտադիր են յերկու կողմերի համար ու կյանքի մեջ պետք է մտցվեն Գ.Կ.Հ.-ի վորոշման մեջ նշանակված ժամանակից:

23. Յեթե կողմերից մեկը հրաժարվում է կամովին կատարել Գ.Կ.Հ.-ի վորոշումները, վորոշումը կատարելու մեջ շահագրգռված կողմը 48 ժամվա ընթացքում ուղղում է Գ.Կ.Հ.-ի վորոշումը Աշխ. Դատարանը, վորոշումը ի կատար ածելու համար:

§ 24. Յեթե Գ.Կ.Հ.-ում համաձայնության չեն գալիս, ապա վիճելի հարցը նրան վերաբերվող բոլոր փաստաթղթերի ու նյութերի հետ միասին, 48 ժամվա ընթացքում ուղղվում է Միության միջոցով կոնֆլիկտ-

ների համար վորոշված կարգով նրան ուղղութիւն տալու համար:

§ 25. Գ.Կ.Հ. նիստերի արձանագրութիւններն պատճենները ուղարկվում են Միութիւն, յերեք օրվա ընթացքում:

«Մ Ի Ո Ի Թ Յ Ո Ի Ն»

Վարչութեան 'Նախագահ' Ս. ԳՈՒՏԻՆ.

Վարչութեան Քարտուղար՝ Ո. Ա. ԶԵՑՆԱԼՈՎ.

Միութեան Տեղ-ի վարիչ՝ Պ. ՄԵՇԿՈՎ.

«Ա Զ Ն Ա Վ Թ»

Վարչութեան 'Նախագահ' Մ. ԲԱՐԻՆՈՎ.

Վարչ. Անդամներ՝ ՅԱ. ԼԱՎՐԵՆՏԵՅՎ, ՅԱ. ՐԻՍԿԻՆ.

Աշխատ. Եկոմոսիկ. Բաժնի Վարիչ՝ Բ. ՇԵՑՆԻՆ.

Հավաքական պայմանագրի § 10-ի
Հավելում № 3.

Հ.Խ.Ս.Մ.-ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ».

Հ.Խ.Ս.Մ.-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսսարների Խորհուրդը վորոշում ե՝

1. Ժամանակավոր բանվորներ ու ծառայողներ են համարվում՝ ա) այն բանվորներն ու ծառայողները, վորոնք վարձվում են կամ վորոշ, յերկու ամսվա սահմաններում ժամանակով, կամ անորոշ ժամանակով, բայց վոչ ավել յերկու ամսից. բ) այն բանվորներն ու ծառայողները, վորոնք վարձվում են թեև ավելի քան յերկու ամսով, բայց վոչ ավել չորս ամսից, ժամանակավորապես բացակայող աշխատավորների փոխարեն, վորոնց վերապահվում ե իրենց պաշտոնը:

2. Աշխատավորները, վորոնք վարձվում են վորպես ժամանակավոր բանվորներ ու ծառայողներ, պետք ե այդ մասին նախազգուշացվեն, աշխատանքի պայմանագիրը կնքելու ժամանակ:

3. Ժամանակավոր բանվորների ու ծառայողների վրա ընդհանուր աշխատանքի լրենագրութիւնները տարածվում են բացի այն կետերից, վորոնք հիշված են այս վորոշման հետագա հոդվածներում:

4. Ներկա ձեռնարկութեան, հիմնարկութեան կամ տնտեսութեան մեջ գոյութիւն ունեցող հալածական պայմանագիրը (տարիֆային համաձայնութիւն) տալովում եւ ժամանակավոր բանվորները ու ծառայողները վրա միայն այն դեպքում ու սահմաններում, վորը նախատեսուիւմ եւ այդ պայմանագրով (համաձայնութեամբ):

5) Ժամանակավոր բանվորներին ու ծառայողներին տրվում են հաշվեկրթական (բառնաւորայա կնիք-կա) անկախ նրանց վարձելու ժամանակից. յետե վարձվողը վարձված եւ ավելի քան յերկու շաբաթ ժամանակով կամ փաստացիորեն յերկու շաբաթից ավելի եւ աշխատել:

6. Վարձվողի կողմից աշխատանքի պայմանագիրը կարող եւ լուծվել—նախադգուշացնելով այդ մասին վարձողին մի որ առաջ:

7. Յետե ժամանակավոր բանվորներն ու ծառայողները վորոշ ժամանակով են վարձված, ապա աշխատանքի պայմանագիրը վարձողի կողմից կարող եւ լուծվել՝ ա) Ձեռնարկութեան, հիմնարկութեան կամ տնտեսութեան մասնակի կամ ամբողջական լիկվիդացիայի դեպքում, նույնպէս եւ ձեռնարկութեան, հիմնարկութեան կամ տնտեսութեան աշխատանքների կրճատման դեպքում. բ) Արտադրական բնույթ կրող պատճառներով հիմնարկութեան կամ տնտեսութեան աշխատանքները մի շաբաթից ավել ժամանակով դադարեցնելու դեպքում. գ) Յետե վարձվողը անպետք եւ գտնվում այն աշխատանքի համար, վորի համար վարձված եւ. դ) Յետե վարձվողը աշխատանքի պայմանագրով իր վրա դրված պարտականութիւնները կամ ներքին կա-

նոնադրութեան որեւքները չի կատարում. յե) Յետե վարձվողը համապատասխան որգանների կողմից քրեական պատասխանատվութեան եւ յենթարկվում, իր աշխատանքի հետ անմիջական կապ ունեցող գործած արարքի համար, նույնպէս եւ այն դեպքում, յետե վարձվողը մի շաբաթից ավել ձերբակալվում եւ. ժ) Յետե վարձվողը առանց հարգելի պատճառների 3 որից ավել գործի չի դուրս գալիս—մի ամսվա ընթացքում. զ) Յետե վարձվողը ժամանակավորապէս աշխատանքի ընդունակութիւնը կորցնելու պատճառով մի շաբաթից ավել գործի չի դուրս գալիս եւ կամ յերեք որ միմյանց յետեից գործի չի դուրս գալիս ուրիշ հարգելի պատճառներով:

Ծանոթութիւն. Ներկա հոդվածում հիշված պատճառներով գործից արձակելու դեպքում, կարելի չէ նախապէս Գնահատ. Կոնֆլիկտ. Հանձնաժողովի վորոշումը, բայց վարձվողը իրավունք ունի բողոքելու արձակման դեմ կոնֆլիկտային կարգով ու անիրավացիորեն գործից արձակման բողոքը պետք եւ հայտնվի յերկու շաբաթից վոր ուշ, հաշվելով արձակման որից:

8. Ժամանակավոր բանվորներն ու ծառայողները, վորոշք վարձվում են վորոշ ժամանակով ու արձակվում են հիմնարկութեան, ձեռնարկութեան կամ տնտեսութեան լիկվիդացիայի, աշխատանքների կրճատման կամ մի շաբաթից ավել ժամանակով աշխատանքների դադարեցման պատճառով (հոդ. 7-րդ կետ «ա» եւ «բ») պետք եւ նախադգուշացվեն վարձողի կողմից, արձակումից յերեք որ առաջ. յետե չեն նախադգուշացվում,

նրանց տրվում և վիճադնայ նպաստ, 3 որվա միջին աշխատավարձի չափով:

Վերոշ ժամանակով վարձված ժամանակավոր բանվորների ու ծառայողների գործից արձակելու մնացած բոլոր դեպքերում (հոդ. 7-րդ կետ «գ» «դ» «յե» «զ» «ժ»)- նախազգուշացում կամ վիճադնայ նպաստ չի տրվում:

9. Յեթե ժամանակավոր բանվորներն ու ծառայողները վարձվում են անորոշ ժամանակով, ապա վարձողը իրավունք ունի պայմանագիրը լուծելու, յերբ կամենա առանց պատճառները բացատրելու, նախազգուշացնելով վարձվողին արձակումից մի որ առաջ, իսկ յեթե չի նախազգուշացրել, վճարելով աշխատավորին մի որվա միջին աշխատավարձ:

10. Յեթե աշխատանքի պայմանագիրը լուծվում և վարձողի իր վրա վերցրած պարտականությունների խախտման պատճառով, ապա վարձվողը իրավունք ունի վիճադնայ նպաստ ստանալու յերեք որվա միջին աշխատավարձի չափով, յեթե վերոշ ժամանակով և վարձված ու մի որվա միջին աշխատավարձ մնացյալ դեպքերում:

11. Յեթե ժամանակավոր բանվորի կամ ծառայողի աշխատանքները տեւում են մի շաբաթից ավել, ապա վարձվողի պահանջով նրա աշխատավարձը պետք և վճարվի շաբաթը մեկ անգամից վոչ ուշ:

Մանրորոշումն. Ներկա հոդվածի ուշժը չի տարածվում այն ժամանակավոր բանվորների ու ծառայողների վրա, վորոնք վարձվում են ժամանակավորապես բացակայող աշխատավորներին փոխարինելու համար (հոդ. 1-ին կետ «բ»),

12. Սխալ վճարված վարձատրության մասին յեղած բողոքները պետք և հայտնվեն վոչ ուշ քան մի ամսից, հաշվելով վարձատրությունը ստացած որից:

13. Յեթե ժամանակավոր բանվորը կամ ծառայողը վարձվում և վոչ ավել քան վեց որով, ապա այդ վեց որվա սահմաններում աշխատանքը շաբաթվա հանգստյան որերին կարող և կատարվել առանց Գնահատ. Կոնֆլիկտ. Հանձնաժողովի ու Աշխ. Վերատեսչութ. հաստատման ու վարձատրվում և պայմանավորված աշխատավարձի սովորական չափով:

Այդպիսի դեպքերում պարտադիր չե նաե աշխատանքի ժամերի կրճատումը շաբաթական հանգստյան որերի ու տոների նախորդակին:

14. Յեթե ժամանակավոր բանվորը ու ծառայողը չի կատարել աշխատանքը, վորը դադարեցվել և վարձողի կարգադրությամբ, ապա բաց թողված ժամանակի աշխատավարձը—բայց վոչ ավել քան մի շաբաթվա—վճարվում և նրան տարիֆային վարձի չափով. այլ դեպքերում վարձվողի կողմից նրանից անկախ պատճառներով չկատարված աշխատանքը նույնպես և վարձողի կարգադրությամբ չկատարած աշխատանքի մի շաբաթից ավել ժամանակի. բաց թողված ժամանակի վարձատրության չափը, վորոշվում և կողմերի համաձայնությամբ:

15. Յեթե ժամանակավոր բանվորներն ու ծառայողները դադարեցնում են իրենց աշխատանքները, կանչվելով որենքով նրանց վրա դրված 1925 թ. 18/X պարտադիր զինվորական ծառայության պարտականությունները կատարելու (С. 3. Союзa ССР 1925 г.

№ 62 стр. 463) նրանց պաշտոնն ու աշխատավարձը չի վերապահվում իրենց:

Նման դեպքերում միանվագ նպաստ է տրվում, մի ամսից ավել աշխատողին—մի շաբաթվա միջին աշխատավարձի չափով ու վեց ուրից ավել աշխատողին, բայց վոչ ավել մեկ ամսից—յերեք ուրվա միջին աշխատատեղի չափով:

Վեց ուրից պակաս աշխատողին նպաստ չի տրվում:

16. Վարձողը պարտավոր չէ վճարել վարձողի աշխատավարձը նրա աշխատանքից բացակայելու ժամերի համար, յերբ նա մասնակցում է վերականգնողական աշխատանքի, պրոֆեսիոնալ ու կոոպերատիվային կազմակերպությունների կողմից կանչվող համագումարներին, կոնֆերանսներին ու լիազորների ժողովներին:

17. Յերբ ժամանակավոր բանվորները ու ծառայողները վարձողի կարգադրությամբ տեղափոխվում են մի աշխատավայրից մի ուրիշ տեղ աշխատելու, ապա վարձվողներին վճարվում է տեղափոխման ծախքերը: Կոմպենսացիայի մնացյալ տեսակները, նույնպես և տեղափոխման ժամանակի աշխատավարձի չափը վորոշվում է կողմերի համաձայնությամբ:

18. Վարձվողին պատկանող գործիքների մաշվելու համար կոմպենսացիան, կարող է կողմերի համաձայնությամբ մտցվել աշխատավարձի մեջ:

19. Ժամանակավոր բանվորներն ու ծառայողները արձակուրդի կամ փոխարենը կոմպենսացիայի իրավունքով չեն սպասվում:

20. Ժամանակավոր բանվորներին ու ծառայողներին տրվում է սպեց-հագուստ (ձեռնոցներ, գոգնոցներ և այլ) նախապաշտպանական պիտույքներ, արտադրություն վտանգից կամ վնասից պաշտպանվելու համար. (բեռավերատորներ, ակնոցներ և այլ) ՀԽՍՄ-ի Աշխտպիտի հատուկ հրահանգի համաձայն:

21) Ժամանակավոր բանվորների ու ծառայողների Սոց. ապահովությունը գեկավարում է Աշխ. ու Պաշտպ. Մոբհրդի հատուկ վորոշումով:

22. Սույն վորոշման ուժը չի տարածվում հետևյալ դեպքերում. ա) յերբ ժամանակավոր բանվորը կամ ծառայողը աշխատել է համապատասխան 1 հոդ. «ա» և «բ» կետերի ժամկետից ավելի՝ աշխատանքային պարտավորություն տևողության հետևանքով, բ) յերբ գործից հեռացրված ժամանակավոր աշխատող բանվորը կամ ծառայողը նորից գործի է ընդունվում միևնույն ձեռնարկի, հիմնարկի կամ տնտեսության մեջ մի շաբաթից վոչ պակաս ընդմիջումից հետո, և յեթե նրա աշխատանքի ժամերը նախ քան ընդմիջումը և նրանից հետո տեղ և յերկու կամ չորս ամիս:

Վերոյիշյալ յերկու դեպքում ևլ բանվորը կամ ծառայողը չի համարվում ժամանակավոր՝ իր և նրա վարձողի՝ աշխատանքային պարտավորության սկզբից: Սակայն ժամանակավոր բանվորին կամ ծառայողին մշտական աշխատանքի տեղափոխելու դեպքում Սոցիալական Ապահովագրության գանձարկին վճարված գումարը՝ մինչև տեղափոխվելը հաշվի չի առնվում:

23. Ժամանակավոր այն բանվորների և ծառայողների, վորոնք զբաղված են սեզոնային գործերում, ներկա կանոնադրության 1—22 հոդվածներին

6. Աշխատանքի ժամանակը հանքերում, գործարաններում, ֆաբրիկաներում և արհեստանոցներում, նույնպես և ընդմիջումի ժամանակը հանգստանալու և մնունդ ընդունելու համար աշխատավորների բոլոր կատեգորիաների համար, վարձվում է առանձին ցուցակով ամեն մի ձեռնարկության համար:

7. Աշխատանքի գալու և գնալու ժամանակ բանվորներն ու ծառայողները պարտավոր են կատարել ձեռնարկում հաստատված կոնտրոլի որենքները:

8. Աշխատանքի սկզբի համար նշանակված ժամանակից ուշ աշխատանքի յեկողը համարվում է ուշացած: Ուշացողները ցուցակագրվում են առանձին, նրանց տուգանքի յենթարկելու համար՝ «տուգանքների ցուցակի» համաձայն:

15 բոլորից ավել ուշացողը կարող է աշխատանքի դիմել միայն ադմինիստրացիայի թույլտվությամբ:

9. Արգելվում է ինքնակամ գործից հեռանալը, ինչ պատճառով ել վոր լինի: Յեթե աշխատավորին անհրաժեշտ է գործից հեռանալ վորոշված ժամանակից շուտ, ապա նա այդ մասին պարտավոր է հայտնել ադմինիստրացիային ու ստանալ համապատասխան թույլտվություն:

10. Առանց հարգելի պատճառների բաց թողված աշխատանքի ժամանակը, նշանակվում է վորպես պրոգուլ ու չի վարձատրվում:

11. Աշխատավորները, վորոնք կանչվում են դատարանական կամ այլ պետական որգանների, նույնպես և պրոֆեսսիոնալ ու կուսակցական կադմակերպությունների կողմից, պարտավոր են գործի դուրս

չգալու որվա մասին նախորդ հայտնել ադմինիստրացիային ու ներկայացնել իրենց կանչելը հաստատող փաստաթուղթը: Յեթե անհնարին է նախորդ հայտնել ադմինիստրացիային, ապա հետևյալ որը աշխատավորը պարտավոր է ներկայացնել արդարացուցիչ փաստաթուղթ:

12. Յեթե աշխատավորը հիվանդության կամ այլ հարգելի պատճառներով անկարող է դուրս գալ աշխատանքի, պարտավոր է ձեռք առնել բոլոր միջոցները ադմինիստրացիային այդ մասին տեղեկացնելու համար, իսկ գործի դուրս գալուց տալ բացատրություն ու գործի դուրս չգալու պատճառները ապացուցող համապատասխան փաստաթուղթ:

Աշխատանքի դուրս չգալը համարվում է հարգելի բոլոր դեպքերում, յերը աշխատավորը անկարող է իր գործին դուրս գալուն արգելք հանդիսացող պատճառները հեռացնել, մասնավորապես՝ ա) Աշխատավորի հիվանդությունը. բ) Աշխատավորի ընտանիքի անդամի մահը կամ լուրջ հիվանդությունը, վորը պահանջում է աշխատավորի ներկայությունը և յեթե չկա մի ուրիշ անձնավորություն հիվանդի պահպանության համար. գ) Աղետները (հրդեհ, հեղեղ և այլ). դ) կարանտին. յե) Յեթե աշխատավորը կատարում է իր քաղաքացիական ու հասարակական պարտականությունները, նույնպես և յեթե պահանջում են իշխանության որգանները, որենքներով նախատեսված պարտականությունները կատարելու համար:

13. Արտաժամյա աշխատանքներ կարող են կատարվել միայն ադմինիստրացիայի կարգադրությամբ, Աշխատ. վերատեսչության թույլտվությամբ ու

միութեան համապատասխան կազմակերպութեան համաձայնութեամբ:

14. Առանց հարգելի պատճառների աշխատանքի դուրս չգալը սովորական աշխատանքի որերին, կամ պարտադիր արտաժամյա աշխատանքներին, համարվում է հանցանք, վորի համար մեղավորը յենթարկվում է տուգանքի, համաձայն այս պայմանագրին կցված «տուգանքների ցուցակի»-ի:

15. Արտաժամյա աշխատանքները անպայման պարտադիր են համարվում հետևյալ դեպքերում՝

ա) Հրդեհի, հեղեղի ու այլ տարերային աղետների դեպքում, վորոնք սպառնում են աշխատավորի կյանքին կամ Ազնավթի կայքին կամ վորը կարող է ձեռնարկութեան աշխատանքի դադարեցման պատճառ դառնալ:

բ) Յեթե անհրաժեշտ է դադարեցնել սկսած աշխատանքը, վորի դադարեցումը կարող է նյութերի ու մեքենաների փչանալու պատճառ դառնալ, նույնպես է դադարեցնել վերջինների աշխատանքը:

գ) Յեթե անհրաժեշտ է մեխանիզմների ու շինութեան նորոգման ու վերականգնման աշխատանքներ կատարել և յեթե ուշացնելու հետևանքով կարող է դադարեցվել աշխատանքը զգալի թվով բանվորների համար:

դ) Այն աշխատանքները, վորոնք անհրաժեշտ են ամեն տեսակի ֆնանսների առաջն առնելու համար:

յե) Աշխատանքներ կատարելու բոլոր դեպքերը, վորոնցով նախագուշացվում է ձեռնարկութեան գործունեութեան դադարեցումը:

16. Անընդհատ աշխատանքներ կատարվող ձեռնարկներում ադմինիստրացիան վորոշում է աշխատանքների ժամանակը կաթսաները տաքացնելու ու մեքենաները աշխատեցնելու համար, վորը պետք է համաձայնեցրված լինի հանքագործկոմի հետ ու հատուկաձև Աշխ. Վերատ. կողմից:

Վախսեմի ախսսեմի.

17. Անընդհատ աշխատանքների ժամանակ, վախտենին, վորտեղ այդ անհրաժեշտ է աշխատանքի կամ արտադրութեան համար, պետք է աշխատի և բոլոր հեղափոխական տոներին՝ առանձին ու շաբաթվա հանգրտան որերին: Աշխատանքները կարող են դադարեցվել միայն ադմինիստրացիայի կարգադրութեամբ:

18. Յեթե փոխարինողը (ամենա) ուշանում է ավելի քան 10 րոպեյով, վախտենին պարտավոր է դիմել իր անմիջական պետին փոխանորդ նշանակելու համար ու վոչ մի դեպքում չպետք է թողնի վախտան, առանց հանձնելու:

Ադմինիստրացիան պետք է ձեռք առնի բոլոր միջոցները աշխատավորին փոխարինելու համար: Միայն բացառիկ դեպքում ադմինիստրացիան կարող է պահել աշխատավորին, բայց վոչ ավել քան մի վախտից:

19. Վախտան ընդունելիս աշխատավորը պետք է նայե բոլոր մեքենաները, վորոնցով նա պետք է աշխատի, գործիքները և այլն, նույնպես է կայքը, վորը հանձնվում է իր պահպանութեան: Յեթե մեքենան կամ նախադաշտական հարմարութեանները փչացած են կամ փչանում են և կամ կայքն է պակաս,

աշխատավորը պարտավոր է իսկույն այդ մասին հայտնել իր անմիջական պետին:

20. Վախտանների փոխելը թույլ է տրվում միայն աղմինխտրացիայի համաձայնությամբ:

Աւխասանքներ կազմակերպելը ու կատարելը.

21. Ձեռնարկության աշխատանքի ընդունվող ամեն մի բանվոր ստանում է իր աշխատանքների համար անհրաժեշտ գործիքներ՝ նույնպես և հավաքական պայմանագրով վորոշված սպեց-հագուստ ու նախապաշտպանական առարկաներ, վորոնք մտցվում են բանվորի հաշվեգրքույկի և ձեռնարկության գործիքների հաշվեգրքի մեջ:

Ծանոթություն. Աշխատանքների համար սեփական գործիքներով ոգտվել կարելի է միայն աղմինխտրացիայի թույլտվությամբ ու վարձատրվում է գոյություն ունեցող օրենքների համաձայն:

22. Սգելնի աշխատանքներ կատարելիս, աշխատավորին տրվում է համապատասխան սգելնի գները նշանակված կարգադրություն (նարյադ): Բանվորը պարտավոր է աշխատանքները կատարել վորոշված ու իրեն հայտարարված գներով: Թույլ չի տրվում աշխատանքից հրաժարվելը—նույն իսկ այն դեպքում յեթե բանվորը համաձայն չէ իրեն հայտարարված գների հետ: Այդ դեպքում նրան իրավունք է տրվում բողոքել աղմինխտրացիայի դեմ Գ.Կ.Հ.-ում:

23. Աղմինխտրացիան պարտավոր է հետևել վոր ստանոկներն ու մեքենաները աշխատանքի սկզբին

միանգամայն կանոնավորված լինեն ու նրանց մոտենալու ճանապարհը ազատ ու նախորոք պետք է միջոցներ ձեռք առնի այդ բոլորը կատարելու համար:

24. Աշխատանքի ընթացքում մաշված, փչացած կամ կոտրված գործիքները, ստանոկների ու մեքենաների փոխվող մասերը պետք է հնարավորության չափ շուտ փոխարինվեն նորերով:

25. Մեքենայի, ստանոկի կամ պաշտպանողական հարմարությունների կոտրվելու դեպքում, բանվորը պարտավոր է իսկույն դադարեցնել աշխատանքը ու հայտնել այդ մասին իր անմիջական պետին:

26. Ստացված գործիքները ու նախապաշտպանական հարմարությունները պետք է պահվեն վորոշված կարգի համաձայն: Արգելվում է, առանց աղմինխտրացիայի թույլտվության այլ ցեխերում ու բաժանմունքներում ուրիշներին հանձնելը կամ ձեռնարկությունից դուրս տանելը:

27. Գործիքները—վորոնք նշանակված են ընդհանուրի ոգտվելու համար, նույնպես և մոդելները, շարլոնները և այլ ոգտագործելուց հետո պետք է անմիջապես հանձնվեն հետ:

28. Աշխատանքից արձակվող կամ արձակուրդ գնացող աշխատավորները պարտավոր են հետ տալ իրենց հանձնված ամբողջ կայքը:

29. Աշխատավորը պարտավոր է խնայողաբար վերաբերվել իրեն հանձնված մեքենաներին, ստանոկներին, գործիքներին ու այլ առարկաներին, նույնպես և նյութերին, վորոնք ստանում են աշխատանքի համար:

30. Աղմինխտրացիան պարտավոր է տալ աշխատավորներին վորոշված ձևի ձպեց-հագուստ:

Բանվորները պարտավոր են աշխատանքների ժամանակ սպեց-հագուստ հագնել:

Առանց հարգելի պատճառների բանվորները չըպետք է թույլատրվեն աշխատանքների առանց սպեց-հագուստի:

Աշխատանքի վայրերում սպեց-հագուստի պահելու համար պետք է լինեն հատուկ արկղներ:

31. Յեթե աշխատանքների պահանջին անհամապատասխան նյութեր են ստացվում (վատ տեսակի, քիչ քանակով և այլ) ապա բանվորը պարտավոր է առանց ուշացնելու հայտնել այդ մասին իր անմիջական պետին, վոր պարտավոր է միջոցներ ձեռք առնել անպետք նյութերը փոխարինելու համար:

32. Յեթե աշխատանքը կատարելուս բրակ է ստացվում, ապա աշխատանքի կարգադրության (նաւրյադի) մեջ նշանակվում է ժամանակը, վորը կորցված է բրակ յեղած իրը պատրաստելու վրա, նույնպես և բրակի բնույթն ու պատճառները:

Նախազգուշացման միջոցները աշխատանքի ժամանակ.

33. Նոր գործի գիւմող աշխատավորին աղմինխտրացիան պարտավոր է ծանոթացնել աշխատանքի բնույթի և արտադրության վտանգավոր ու ֆիսասակարմոմենտների հետ: Աշխատավորներին, վորոնք գործիքներ են ստանում, աղմինխտրացիան պարտավոր է ծանոթացնել նրանց վտանգավոր մասերի ու ոգտագործելու ձևի հետ:

34. Բոլոր աշխատավորները պարտավոր են կատարել անհրաժեշտ կամ առանձին կանոնադրությամբ վորոշված նախազգուշացման միջոցները ու սպառնացող վտանգի առաջն առնել, նախազգուշացնելով վերջինիս մասին ուրիշ բանվորներին ու աղմինխտրատիվ-տեխնիկական պերսոնալին, նույնպես և հետեւի նախապաշտպանական հարմարությունների կանոնավոր լինելուն:

35. Աշխատանքների անմիջական ղեկավար տղմինխտրացիան պարտավոր է հետեւել մեքենաների կանոնավոր ու անվտանգ լինելուն: Բացի այդ, ամիսը մեկ անգամից վոչ պակաս Աշխատ. պաշտպան. ներկայացուցչի հետ միասին պետք է քննի ամբողջ ձեռնարկության մեքենաների, ստանոկների, տրանսմիսսիաների շարժվող մասերը ու բոլոր նկատված թերությունները վերացնել, մինչև նրանց աշխատելը:

36. Դիմադրող զեպքերից խուսափելու նպատակով աղմինխտրացիան արգելում է մոտենալ մեքենաներին, ստանոկներին, գործիքներին՝

ա) անփորձ ու մեքենաներին անծանոթ անձանց.

բ) հարբածներին,

գ) բոլոր նրանց, վորոնց աշխատանքը կապված չէ տվյալ մեքենայի հետ:

37. Արգելվում է՝

ա) ինքնակամ, վորոշված կարգից ու անվտանգության տեխնիկայի որենքներից դուրս աշխատեցնել մեքենաները:

բ) Չհետեւել աշխատող ստանոկներին ու մեքենաներին:

դ) Յուդէի, ամրացնել, նորոգել մեքենայի ստանդինների մասերը, նրանց աշխատելու ժամանակ կամ մերձենալ նրանց յերբ շարժվում են.

դ) Կարել, հանել ու հազցնել բեմներ մեքենայի աշխատելու ժամանակ.

յե) Առանց առանձին թույլտվութեան ոգտվել մեքենաներով, գործիքներով՝ նշանակված ներկա աշխատանքի համար.

զ) Անկանոն մեքենաների վրա աշխատելը առանց ադմինիստրացիայի թույլտվութեան:

ե) Կանգնել տալյաների, կրանների, ելեվատորների տակ նրանց աշխատելու ժամանակ, յերբ այդ կարող է վտանգավոր լինել բանվորի կյանքի ու առողջութեան համար:

ը) Մերձենալ տակ անցկացնող գործիքներին ու լարերին:

թ) Առանց համապատասխան ադմինիստրացիայի գիտութեան ու թույլտվութեան և առանց համապատասխան նախապաշտպանական միջոցների մաքրել հորերը, բեզերվուարները, ամբարները, վորտեղ կարող են հավաքվել ֆլասակար գաղեր:

ժ) Կտրել, փշացնել ու հանել մեքենաների, տրանսմիսիաների ու այլ գոյութուն ունեցող ցանկապատերը:

38. Ադմինիստրացիան պարտավոր է հետեւել այնպիսի աշխատանքների կանոնավոր կազմակերպմանը, ինչպես որինակ ծանր առարկաների մշակումը խառատային ու այլ ստանդինների վրա, նույնպես և ծանրութեան ընդհանրացնելու կանոնավոր կազմակերպման,

մանավանդ յերբ այդպիսի աշխատանքներ են կատարում մի խումբ բանվորներ:

39. Աշխատավորները պարտավոր են աշխատանքի ժամանակ ոգտվել վորոշված սպեց-հագուստով ու նախապաշտպանական հարմարութեաններով (նախապաշտպանող ակնոց, բեպիրատորներ, բետինե ձեռնոցներ ու կրկնակոշիկներ, իզոլյացիոն փայտեր, տախտակներ, կաթ և այլ):

40. Աշխատանքի ընթացքում աշխատավորին պատահած բոլոր դժբաղդ դեպքերի մասին, աշխատավորը պարտավոր է անմիջապես հայտնել ադմինիստրացիային ու գնալ բժշկական հիմնարկութեանը, բժշկական ոգնութեան ստանալու համար: Յեթե ֆլասավածը, իրեն հասած ֆլասի հետեանքով չի կարող անձամբ գնալ բուժարան, ապա նրան պարտավոր է ուղարկել ադմինիստրացիան:

Ամեն տեսակի դժբաղդութեան դեպքերի մասին (տրավմատիկական կամ պրոֆթունավորման) ադմինիստրացիան վորոշված կարգով պետք է հայտնի Աշխատ. Վերատեսչ., պարզի դժբաղդ դեպքի պատճառները ու ձեռք առնի միջոցներ վորպետքի ապագայում չկրկնվեն միևնույն պատճառով դժբաղդութեաններ:

41. Հրդեհից նախադգուշանալու նպատակով, բոլոր վտանգավոր տեղերում պետք է կախվեն համապատասխան գրութեաններ՝ «Այստեղ արգելվում է ծխախոտ ծխելը» և «Ամեն մի բանվորից պահանջվում է զգուշ լարվել կրակի հետ»:

42. Յեթե ձեռնարկութեաններում կամ նրանց մոտ տեղերում հրդեհ է սկսվում, վորը վտանգ է սպառնում ձեռնարկութեան կաքին կամ շենքին, նույնպես

և այլ տարերային աղետների ժամանակ, ձեռնարկութեան բոլոր բանվորներն ու ծառայողները պարտավոր են ձեռք առնել բոլոր միջոցները վտանգը դադարեցնելու կամ նրա առաջն առնելու համար, կատարելով բոլոր կարգադրութեանները, վրոնք ուղղված են աղետի դեմ կռիւն համար: Կարգապահութեան՝ աշխատանքի ժամանակ:

43. Աղմինխտրացիան թույլ չի տալիս աշխատել հարբած գրութեան մեջ լինող բանվորին ու յետե գտնվում է այդպիսին աշխատանքի ժամանակ—խուլուն հեռացվում է:

44. Բոլոր աշխատավորներին արգելվում է՝

ա) Առանց կարիքի թողնել իր աշխատանքի տեղը:

բ) Աշխատանքի ժամանակ զբաղվել կողմնակի գործով—լրագիր կարդալով, խոսելով, թղթախաղով կամ այլ խաղերով զբաղվել, նույնպես և միուս աշխատավորներին խանգարել:

գ) Բերել իր հետ ոգելից խմիչքներ ու կրակի վտանգ սպառնացող իրեր:

դ) Քնել հերթապահ լինելու կամ առհասարակ աշխատանքի ժամանակ:

յե) Ծխել բոլոր կրակի վտանգ սպառնացող տեղերում:

45. Աշխատավորները պարտավոր են կատարել բոլոր ամիջապես իրենց վերաբերվող աղմինխտրատիվ-տեխնիկական պերսոնալի կարգադրութեանները—նրանց իրավունքների սահմաններում:

Առողջապահության ուղեցրեր.

46. Աշխատավորները պետք է կատարեն հասարակական ու սանիտարական առողջապահութեան բոլոր սրենքները, հետեւն բնակարանի մաքրութեան, չկեղտոտեն ու մաքուր պահեն իրենց աշխատանքի տեղը:

47. Յերես ու ձեռքեր լվանալու համար ձեռնարկութեաններում պետք է լինեն լվացարաններ, սապոն և սրբիչ:

48. Բոլոր շենքերում պետք է լինեն բակեր յեռացրած ջրով, վորը պետք է վտխվի ամեն որ ու նրա մոտ ջուր խմելու համար աման, վորը ժանգոտված չպետք է լինի: Բակի միջի ջուրը պետք է սառեցված գրութեան մեջ լինի, իսկ հուլիս-օգոստոսին ջուրը պետք է սառեցվի սառուցով:

49. Բանվորական շենքերում պետք է բավական թվով թքամաններ լինեն:

50. Մուռնդ ընդունելու շենքերը պետք է համապատասխանվեն առողջապահութեան պահանջներին:

51. Ձեռնարկութեաններին կից պետք է լինեն բավական թվով արտաքնոցներ, վորոնք պետք է պահվեն մաքուր:

Այդ նպատակին չհասկացրած տեղերով ոգտվելը արգելվում է:

52. Աղմինխտրացիան պետք է ձեռք առնի բոլոր անհրաժեշտ սանիտար-տեխնիկակ. միջոցները ու հեռացնի արտադրութեան բոլոր ֆիասակար մոմենտները:

Աշխատանքները վերջացնելուց հետո բոլոր արհեստանոցները ցեխերը, բաժանմունքները պետք է

մաքրվեն ու ուր փոխվի, պատահանները բացելու ու վիճարկելու միջոցով:

Յեթե ձեռնարկում աշխատանքները կատարվում են մի քանի սմենայով, ապա պետք է մաքրել այդ սմենաների փոխվելու ընդմիջումների ընթացքում:

Ներկա ներքին կանոնադրությունը վավերացված է 1926 թ. հոկտեմբերի 17-ին Ա.Ն.Ս.Հ. Աշխատողների կոլեգիայի կողմից:

ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԱԶՆԱՎԹԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

1. Աղմինխտրացիայի վորոշված միության որդանների հետ համաձայնեցված ու Աշխ. Վերատեսչ. կողմից հաստատված ներքին կանոնադրությունը պարտադիր է բոլոր բանվորների, ծառայողների ու ձեռնարկության աղմինխտրացիայի համար:

2. Ներքին կանոնադրության կետերի խախտման համար կարելի է յենթարկել հետևյալ տուգանքների.

1) Հանդիմանություն—հայտարարելով, ցեխում կամ բաժանմունքում:

2) Հանդիմանություն—հայտարարելով գործարանում ու հայտնելով գործկումին:

3) Արձակումն:

3. Առաջին տեսակի տուգանքի յենթարկում է աղմինխտրացիան, յերկրորդ տուգանքի յենթարկում է աղմինխտրացիան նախորդ գործկումին հայտնելով տուգանքի պատճառն ու ընույթը. յերրորդ տուգանքի յենթարկում է աղմինխտրացիան, բոլոր դեպքերում ԳԿՀ-ի վորոշումից հետո:

4. Արձակումը ներկա տուգանքների ցուցակի համաձայն կատարվում է առանց վիճադնոյ նպաստի ու առանց յերկու շարաթ առաջ նախազգուշացնելու:

5. Այդ տուգանքներին յենթարկում են ու պահում հանցանքների հաշիվը, կես տարվա ընթացքում, հաշվելով ներկա աշխատավորին առաջին տուգանքի յենթարկելու որից. բացառությամբ 6, 7, 8 կետ., վորից հետո հանցանքների ու տուգանքների հաշիվը սկսվում է նորից:

Տուգանքները գումարվում են ու յենթարկված պատիժները գրվում են առանձին ցուցակում:

ՀԱՆՑԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ

6. Առանց հարգելի պատճառների աշխատանքից ուշանալու և ժամանակից շուտ աշխատանքից գնալու համար.

Մեկից մինչև յերեք անգամ ամսվա ընթացք.—1 տուգ.

4 » 6 » » » —2 »

վեց անգամից ավել » » » —3 »

և բացի այդ, բոլոր դեպքերում պրոգուլ ժամերի համար վարձատրություն չի տրվում:

7. Ձեռնարկությունից կամ աշխատանքի վայրից ժամանակավորապես ինքնակամ հեռանալու համար.

1-ից մինչև 2 անգամ ամսվա ընթացքում — 1-2

3 անգամ — 3

և բացի այդ, բոլոր դեպքերում պրոգուլ ժամերի համար վարձատրություն չի տրվում:

Մանրություն. Գործարանի վարչությունը միության հետ միասին կազմում է աշխատանք-

ների ցուցակը, վորոնց ժամանակ արձակման սպառնալիքով վոչ մի դեպքում թույլ չի տրվում աշխատանքից հեռանալը: Ցուցակը կախվում է ցեխում, գործարանի վարչության ստորագրութեամբ:

8. Առանց հարգելի պատճառի, պրոգնոզի համար

ա) Մինչև յերկու որը ամսվա ընթացքում— 1

բ) Յերկուսից մինչև 6 որ » » — 2

գ) Վեց որից ավել, կամ 3 որ անընդհատ— 3

բացի այդ, պրոգնոզ որերը չեն վարձաարվում

9. Անիրավացիորեն գործից հրաժարվելու համար՝

1 անգամ 1

1—2 անգամ 2

3 անգամից ավել 3

Բացի այդ, աշխատավորը չի ստանում, աշխատանքից բացակայած ժամանակի համար:

10. Արտաժամյա աշխատանքներից հրաժարվելու համար, վորոնց անհրաժեշտությունը նախատեսված է ներքին կանոնադրութեամբ ու հավաք. պայմանագրով,

1-ից մինչև 2 անգամ 1—2

2 անգամից ավել 3

11. Կոնտրոլի որենքները խախտելու համար
Աշխատանքի գալու ու գնալու ժամանակ 1—2

Սխառմատիկաբար խախտման դեպքում (2 անգ. ավել) 3

12. Անցաթուղթը, համարը, հիվանդանոցի թերթը ուրիշին տալու և չար նպատակով ուրիշի փոխարեն թերթը ստորագրելու համար 1—3

13. Աշխատանքի տեղը կողմնակի անձինք ընդունելու կամ իր հետ բերելու համար առանց ազմինիստրացիայի թույլատվության 1—2

Սխառմատիկաբար խախտման դեպքում — 3

Այն ցեխերի, բաժանմունքների, լաբորատորիաների և այլ ցուցակը, ուր կողմնակի անձանց արգելվում է մուտքը, պետք է վաղորոք կախվի աչքի ընկնող տեղում:

14. Առանց գործի ման գալու ու ուրիշներին աշխատելը խանգարելու համար 1—2

Սխառմատիկաբար խախտման դեպքում — 3

15. Անփույթ վերաբերմունքի հետևանքով մեքենաների, ստանկների, գործիքների, նախապաշտպանական հարմարությունների ու ձևանորմության այլ կաշքը փչացնելու համար 1—2

Դիտավորյալ կերպով անելու դեպքում — 3

16. Մեքենաների հետ վարվելու որենքները չըկատարելու նույնպես և նախազգուշացման միջոցները խախտելու համար 1—2

Յեթև յիշյալ հանցանքի հետևանքով դժբախտություն է պատահում ուրիշ բանվորներին, կամ յեթև այդ կրկնվում է սխառմատիկաբար — 3

17. Գործիքների նախապաշտպանական և այլ առարկաների կորցնելու, ուրիշին տալու (ուրիշ ցեխ, կամ բաժանմունք) յեվ կամ հետը տանելու համար, առանց ազմինիստրացիայի թույլատվության

մեկից մինչև յերկու անգամ 1—2

ավելի — 3

18. Իր կարիքների համար կատարած աշխատանքների, նույն նպատակով ձեռնարկին պատկանող նյութերի ու ստորադրյալների աշխատանքը ոգտագործելու համար 2—3

19. Առանց հարգելի պատճառների վորոշված արտադրության չափի հաճախակի չկատարելու համար—3

20. Աշխատանքի ընթացքում վորոշված չափից ավել բրակի համար և յեթե այդ բրակը ստացվել է բանվորի հանցանքով

1-ից մինչև 3 անգամ	1
3-ից » 5 »	2
5 անգամից ավել	3

21. Հրդեհից զգուշանալու միջոցները չկատարելու, կրակի հետ անփութ վերաբերվելու ու արգելված տեղերում ծխախոտ ծխելու համար 1—3

22. Բանվորական բնակարանները մաքուր պահելու անհրաժեշտ միջոցները չկատարելու, իր ժամանակին աղբը չհեռացնելու, առողջապահական որենքներով արտաքնոցները մաքուր չպահելու համար, այն անձանց կողմից, վորոնց այդ հանձնված է 1—2

23. Աշխատանքի ժամանակ քնելու համար

մեկ անգամ	1—2
յերկու անգամ	3

Իսկ պատասխանատու աշխատանքների ժամանակ (կաթսաներ, մեքենաներ) 3

24. Հարբած գործարան գալու ու գործարանում գտնվելու համար 1-ից մինչև 2 անգամ 1—2
2 անգամից ավել 2

25. Մեքենայի կամ ստանոկի կոտրվելը չհայտնելու, նույնպես և առանց ադմինիստրացիայի թույլտվության անկանոն ստանոկի վրա աշխատելու համար, վորը առաջ է բերում նյութերի, գործիքների կամ ստանոկի փչանալը 1—2

26. Ձեռնարկության ադմինիստրատիվ-տեխնիքական պերսոնալը յենթարկվում է հետևյալ տուգանքների.

ա) Առանց հարգելի պատճառների աշխատանքներ նշանակելու համար անկանոն ստանոկների, մեքենաների և այլն, վորի հետևանքով նյութերը, գործիքները փչացել են, կամ դժբախտ դեպք է պատահել, մեղավորը (վարպետը, վարիչը ու այլ ադմինիստրատիվ պերսոնալը) 1—3

բ) Անբավարար հսկելը մեքենաների ստանոկների կանոնավոր լինելուն ու իր ժամանակին նրանց նորոգման համար միջոցներ ձեռք չառնող մեղավորը ադմինիստրացիայից յենթարկվում է 1—2

Յեթե սխտեմատիկաբար կրկնվում է հանցանքը, մանավանդ յեթե դրա հետևանքով դժբաղդություն է պատահել վոր և է մեկի հետ 2—3

գ) Նորոգվող ստանոկը ուղացնելու համար, վորի հետևանքով առաջ է գալիս պրոստոյ, նորոգման համար պատասխանատու անձնավորությունը յենթարկվում է 1—3

դ) Բանվորներին իր ժամանակին նոր աշխատանք, նյութեր ու գործիքներ չտալու համար, վորի հետևանքով առաջ է գալիս պրոստոյ 1—3

յե) Անպետք նյութեր և գործիքներ մատակարարելու

րարելու համար, յեթե առաջուց հայտնի եր նրանց անպետքութիւնը 1—3

դ) Իր ժամանակին զլիսավոր պահեստից անհրաժեշտ նյութեր չստանալը զլիսավոր մագաղինյորի պատճառով, վորի հետեանքով բանվորը մնում է առանց աշխատանքի (պրոստոյ). 1—3

ե) Գործիքներ մատակարարելու ուշացնելը, վորը առաջ է բերում պրոստոյ 1—3

ը) Աղմինիստրացիայի պատճառով աշխատանքի ժամանակ վորոշմամբ բրակի չափը անցնելու համար, թե ներկա ցեխի և թե նրա հետ կապված ցեխերի մեղավորը յենթարկվում է 1—3

թ) Անբավարար մեքենաների հետեւելը՝ նախապաշտպանական հարմարութիւնների կանոնավոր լինելուն՝ աղմինիստրատիվ տեխնիքական պերսոնալի այն անձնավորութեան կողմից, վորին այդ հանձնեցված է

Ներկա տուգանքների ցուցակը վավերացված է 1926 թ. հոկտեմբերի 17-ին Ա.Խ.Ս.Հ. Աշխտակումի կոլլեգիայի կողմից.

Վերոհիշյալ ներքին կանոնադրութիւնը ընդհանուր է Ազնավթի բոլոր ձեռնարկութիւնների համար:

Այդ հիմունքների վրա առանձին ձեռնարկների համար մշակված ներքին կանոնադրութիւնը համաձայնեցրած միութեան համապատասխան որդանների հետ, պետք է ներկայացվեն շրջանային Աշխ. Վերատեսչին վավերացման համար:

Վավերացված է 2-6 շրջ. Աշխ. Վերատեսչի կողմից (1926 թ. 20/11 № 2239):

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ ԱԶՆԱՎ.ԹԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

Բնդհանուր սեռութիւն.

1. Ներքին կանոնադրութեան որենքները պետք է հայտարարվեն հիմնարկութեան բոլոր աշխատավորներին, այդ նպատակով կանոնադրութիւնը կախվում է նրանց մշտական աշխատանքի վայրում:

2. Ներքին կանոնադրութեան որենքները պարտադիր են, թե ծառայողների և թե աղմինիստրացիայի համար:

3. Ներքին կանոնադրութեան ամեն մի խախտումը կամ չկատարելը, հիմք է ծառայում համապատասխան տուգանքի յենթարկելու, համաձայն կցված «Տուգանքների ցուցակ»-ի:

4. Աշխատավորներից վոչ վոք իրավունք չունի արդարանալու ներքին կանոնադրութեան որենքները չիմանալով:

Աշխատանքի ժամանակը.

5. Բոլոր ծառայողները, նրանց պաշտոնից անկախ, պարտավոր են ներկայանալ աշխատանքների ու գնալ աշխատանքից, աշխատանքը սկսելու ու վերջանալու համար վորոշված ժամերին:

6. Աշխատանքներ սկսելու ու վերջացնելու ժամանակը վորոշվում են ընդհանուր կարգադրությամբ Ազնավթի վարչության համար:

Ծանոթութիւն. Բանվորական որվա տեղովությունը վորոշվում է համաձայն գոյություն ունեցող Աշխտգկոմի վորոշումներին:

7. Աշխատանքի ներկայանալու ու գնալու ժամանակ ծառայողները պարտավոր են կատարել կոնտրոլային որենքները:

8. Աշխատանքի սկզբի համար նշանակված ժամանակից ուշ յեկողը համարվում է ուշացած:

Ուշացողները ցուցակագրվում են առանձին, նրանց տուգանքի յենթարկելու համար տուգանքների ցուցակի համաձայն՝ 30 րոպեից աւել ուշանալու դեպքում. ադմինիստրացիան իրավունք ունի ուշացողին թույլ չտալ աշխատելու. այգպիսի դեպքում այգ բանվորական որը համարվում է պրոգուլ, առանց հարգելի պատճառների:

9. Արգելվում է ինքնակամ գործից հեռանալը, ինչ պատճառով էլ վոր լինի:

Յեթե վորոշված ժամանակից շուտ ծառայողին անհրաժեշտ է գործից հեռանալ, նա պարտավոր է ստանալ դրա համար ադմինիստրացիայից համապատասխան թույլտվություն:

10. Աշխատանքների ուշ գալը, աշխատանքից բացակայելը ու նշանակված ժամից շուտ հեռանալը, առանց ադմինիստրացիայի թույլտվության՝ համարվում են պրոգուլ ու բացի տուգանքի յենթարկելուց նաև պահվում է աշխատավարձի համապատասխան մասը:

11. Բոլոր անչափահասների համար, անկախ նրանց կատարած աշխատանքներից, բանվորական որվա տեղովությունը վորոշվում է 14-ից մինչև 16 տարեկանի համար 4 ժամ, իսկ 16-ից մինչև 18 տարեկ. 6 ժամ:

Ծանոթութիւն. Անչափահասներին աշխատանքի ընդունելու ժամանակ ադմինիստրացիան պարտավոր է ճշտորեն պարզել նրանց տարիքը, նրանց բանվորական որվա տեղովությունը վորոշելու համար:

12. Կրճքով կերակրող բանվորուհիների համար վորոշվում են առանձին ընդմիջումներ, կես ժամից վոչ պակաս տեղովությամբ, ի հաշիվ նրանց բանվորական ժամանակի: Ամեն մի բանվորուհու համար ընդմիջումների ժամանակը վորոշում է ԳԿՀ-ն:

13. Արտաժամյա աշխատանքների կարող են կատարվել միայն ադմինիստրացիայի կարգադրությամբ ու Աշխ. վերատեսչի համապատասխան թույլտվությամբ:

14. Առանց հարգելի պատճառների վորոշված աշխատանքի որերին կամ պարտադիր արտաժամյա աշխատանքների չգալը համարվում է հանցանք, վորի համար մեղավորը յենթարկվում է տուգանքի՝ «Տուգանքների ցուցակ»-ի համաձայն:

15. Աշխատանքի գուրս չգալը համարվում է հարգելի բոլոր դեպքերում, յերբ աշխատավորը անկարող է իր գործի գուրս գալուն արգելք հանդիսացող պատճառները հեռացնել. մասնավորապես ա) Աշխատավորի հիվանդությունը բ) Աշխատավորի ընտանիքի

անդամի մասը, կամ լուրջ հիվանդութիւնը, վորը պահանջում է աշխատավորի ներկայութիւնը և յեթե չկա մի ուրիշ անձնավորութիւն, հիվանդի պահպանութեան համար:

զ) Տարերային աղետը (հրդեհ, հեղեղ և այլն):

դ) Յեթե աշխատավորը կատարում է իր քաղաքացիական ու հասարակական պարտականութիւնները, նույնպէս և յեթե պահանջում են իշխանութեան որդանները, որենքներով նախատեսւած պարտականութիւնները կատարելու համար:

16. Յեթե աշխատավորը հիվանդութեան կամ այլ հարգելի պատճառներով անկարող է դուրս գալ աշխատանքի, պարտավոր է ձեռք առնել բոլոր միջոցները ազմինիստրացիային այդ մասին տեղեկացնելու համար, իսկ աշխատանքից դուրս գալուց տալ բացատրութիւն ու աշխատանքի դուրս չգալու պատճառները ապացուցող փաստաթղթեր:

17. Ծառայողների բացակայութիւնը աշխատանքների ժամանակ, պրոֆմիութենական պարտականութիւնները կատարելու համար, թույլ են տրվում բացառապէս Աշխ. Որ. կող. 161 հոդ. համաձայն:

Ծառայողների պարսկականութիւնները աշխատանքի ժամանակ

18. Ծառայողները պետք է ճշտութեամբ ու իր ժամանակին կատարեն իրենց վրա դրված պարտականութիւնները ու կատարեն իրենց պարտականութիւններին վերաբերվող ազմինիստրացիայի բոլոր կարգադրութիւնները:

19. Ծառայողները պարտավոր են կիրթ վերաբերվել հաճախորդների, ազմինիստրացիայի ու իրար հետ և աշխատանքի ժամանակ պահպանեն համապատասխան լուրջութիւն:

20. Ծառայողները պարտավոր են խնայողաբար վերաբերվել նյութերին ու գործիքներին, վորով ոգտվում են աշխատանքի ժամանակ:

Այն անձինք, վորոնք աշխատանքների համար ոգտվում են գրելու մեքենայով, արիֆմոմետրով ու այլ գործիքներով, պարտավոր են հետևել նրանց մաքրութեանը:

21. Ծառայողների մեղավորութեամբ գործիքների ու այլ կայքի փչանալու դեպքում մեղավորը Աշխ. Որ. 83 հոդ. համաձայն պարտավոր է հասցրած քննարկի փոխարենը հատուցանել:

22. Արգելվում է

ա) Տանել իր հետ հիմնարկութեանը պատկանող կայքը ու գործնական թղթերը առանց ազմինիստրացիայի թույլտվութեան:

բ) Առանց ազմինիստրացիայի թույլտվութեան ոգտվել գրելու մեքենայով, գործիքներով և այլն՝ իր անձնական կարիքների համար:

գ) Աշխատանքի ժամանակ լրագիր կամ գրականութիւն կարդալը, վորը կապ չունի ընթացիկ աշխատանքի հետ:

դ) Աշխատանքի ժամանակ կողմնակի խոսակցութեամբ զբաղվելը:

յե) Իր աշխատանքի տեղը թողնելը, առանց առանձին կարիքի ման գալը ու խմբերով հալաքելը, յեթե այդ չի պահանջվում աշխատանքների համար:

դ) Հաճախորդները ընդունելը վսչ ծառայութեան գործերով:

ե) Հաճախորդների հետ կողմից վերաբերվելը ու իրար հետ վիճելը, վսրը կարող է աշխատանքների նորմալ ընթացքը խանգարել:

ը) Հիմնարկութեան հարրած գալը, նույնպես և վոգելից խմիչք խմելը հիմնարկութեան մեջ չի թույլատրվում:

Հարրած ծառայողները խալույն պետք է հեռացվեն հիմնարկութեանից ու այդ դեպքում փաստորեն նրա չաշխատած ժամանակը, համարվում է պրոգուլ:

Ադմինիստրացիայի յեվ ծառայողների փոխհարաբերությունը.

24. Ադմինիստրացիան պարտավոր է ծառայողներին իր բոլոր կարգադրութեանները, ցուցմունքները և նկատողութեանները անել կիրթ ձեվով:

25. Ադմինիստրացիան պարտավոր է ծանոթացնել ամեն մի ծառայողի նրա վրա դրված պարտականութեանների հետ, նույնպես և հայտնել թե անմիջապես ումն և հպատակվում նա:

Այն անձինք, վորոնք համապատասխան լիազորութեան չունեն ադմինիստրացիայից, չեն կարող խառնվել ծառայողների աշխատանքներին:

26. Ադմինիստրացիան իրավունք չունի ծառայողից պահանջելու նրա պարտականութեանների հետ կապ չունեցող աշխատանքներ կատարելը. (բացի դեպքերից, վորոնք նախատեսված են Աշխ. Որ. 36 հոդ.) նույնպես և չի կարող պահանջել ծառայողից հանձնա-

րարութեաններ ու աշխատանքներ կատարելը, վորոնք ծառայութեան բնույթ չեն կրում:

Ծանոթություն. Յեթե ծառայողը ազատ ժամանակ ունի աշխատանքի ժամերին, ապա ադմինիստրացիայի պահանջով նա պարտավոր է ոգնել մյուս ծառայողներին, նույնպես և փոխարինել նրանց բացակայութեան ժամանակ այն դեպքում, յեթե նրանց աշխատանքը միանման է:

27. Ադմինիստրացիան պետք է իր ժամանակին տա ծառայողների աշխատանքների համար բոլոր անհրաժեշտ նյութերը, գործիքները և գրելու պարագաները:

Ծառայողներն ել իրենց հերթին պետք է իր ժամանակին հայտնեն ադմինիստրացիային իրենց աշխատանքների համար պահանջվող առարկաների մասին:

28. Ադմինիստրացիան պարտավոր է տալ ծառայողներին վորոշված ձեվի հաշվեգրքույկներ (ռասչոտ-նայա կնիժկա) ու վճարված աշխատավարձը նշանակել այդ հաշվեգրքույկի մեջ:

29. Աշխատավարձը վճարվում է հսկաքական պայմանագրում նշանակված ժամանակ: Աշխատավարձը վճարվում է աշխատանքի ժամերին՝ առանց աշխատանքի ընթացքը խանգարելու:

30. Աշխատավարձը վճարելու ժամանակից 5 որ առաջ ծառայողները պարտավոր են ներկայացնել իրենց հաշվեգրքույկները ու նրանց փոխարեն ստանալ տալոններ:

Հաշվեգրքույկները, նրանց մեջ աշխատավարձի

չափը նշանակելուց հետո, վերադարձվում է ծառայողին, աշխատավարձը վճարելուց մեկ օր առաջ:

Աշխատավարձի չափին վերաբերվող բոլոր նկատված սխալների մասին, աշխատավորները պետք է իսկույն հայտեն հղմին խտրացիային, համապատասխան ուղղումներ մտցնելու համար:

Հաշվգրքույկը կորցնելու դեպքում, աշխատավորը իսկույն պետք է հայտեն հղմին խտրացիային, վորը կորածի փոխարեն տալիս է նոր գրքույկ:

Ա Ր Ը Ա Կ Ո Ւ Ր Պ Ա Ե Ր.

31. Հերթական արձակուրդներ տալու, ամեն մի բանվորի արձակուրդով ոգտվելու ժամանակը նշանակված ու ԳԿՀ-ի կողմից հաստատված ցուցակը իսկույն կախվում է ի գիտություն բոլորի:

Արձակուրդի ժամանակը կարող է փոխվել, աշխատավորի ու հղմին խտրացիայի համաձայնությամբ:

Սանիտարա-առողջապահական պայմաններ.

32. Բնակարանը, վորտեղ աշխատանքներ են կատարվում, պետք է համապատասխանվեն առողջապահության ու սանիտարիայի պահանջներին:

33. Հիմնարկությունը պետք է ունենա լվացարան բավական քանակությամբ սապոնով, մաքուր սրբիչներ:

34. Այդ շենքերում պետք է լինեն բավական քանակությամբ մաքուր պահվող արտաքնոցներ:

35. Բոլոր ծառայողները պարտավոր են մաքրու-

թյուն պահպանել, չաղտոտել ու մաքուր պահել իրենց տեղերը:

ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ցուցակը.

1. Ներքին կանոնադրության կետերը խախտելու համար, վորոշվում են հետևյալ տուգանքները:

ա) Հանդիմանություն.

բ) Հանդիմանություն հայտարարելով—Ազնավթի վարչության հրամանի մեջ:

գ) Արձակուրդ.

2. § 1-ի Ա. և Բ. կետերով նախատեսված տուգանքի յենթարկում է հղմին խտրացիային, միաժամանակ ամեն մի առանձին դեպքի մասին հայտնելով տեղկումին:

«Գ» կետով նախատեսված տուգանքի բոլոր դեպքերում յենթարկում են ԳԿՀ-ի վորոշմամբ:

4. Այդ տուգանքներին յենթարկում են ու պահում հանցանքների հաշիվը կես տարվա ընթացքում, հաշվելով ներկա աշխատավորի առաջին տուգանքի յենթարկելու օրից, բացառությամբ 6, 7 և 8 կետերից, վորից հետո հանցանքների ու տուգանքների հաշիվը սկսվում է նորից:

5. Տուգանքների յենթարկվում են § 1 վորոշված կարգի համաձայն, բայց ներքին կանոնադրության կետերի. առանձնապես լուրջ խախտման դեպքում կապում են տուգանվել առանց վորոշված կարգի, համարող են տուգանվել առանց վորոշված կարգի, համապատասխան նյութերի մասին տեղեկացնելով տեղկումին:

Հանցանքներն ու տուգանքները.

6. Առանց հարգելի պատճառների իր ժամանակին աշխատանքի չգալու համար՝

1-ից մինչև 3 անգամ ամսվա ընթացքում 1

4 » » 6 » » » 2

6 անգամից ավել » » » 3

7. Հիմնարկությունից ինքնակամ հեռանալու ու առանց ադմինիստրացիայի թույլտվության ժամանակից շուտ աշխատանքը թողնելու համար

1-ից մինչև 2 անգամ ամսվա ընթացքում 1-2

2 անգամից ավել » » » 3

8. Առանց հարգելի պատճառների դործի չգալը, մինչև

2 անգամ ամսա ընթացքում 1

2-ից մինչև 5 » » » 2

5 անգամից ավել կամ 3 օր անընդհատ 3

9. Առանց իրավունքի աշխատանքից հրաժարվելու համար

1 անգամ 1

2—3 » 2

3 անգամից ավել 3

10. Աշխատանքի գալու ու գնալու ժամանակ կոնտրոլի օրենքները խախտելու համար

1-ից մինչև 2 անգամ 1—2

2 անգամից ավել 3

11. Աշխատանքի հետ կապ չունեցող ընթերցանության, անձնական բնույթ կրող խոսակցությունների, անգործ ման գալու և ուրիշներին խանգարելու համար 1—2 սխառեմատիկ կերպով կրկնվելու դեպքում (3 անգամից ավել) 3 տուգանք:

12. Աշխատանքի ժամանակ իր պարտականություններին չվերաբերվող աշխատանքներ կատարելու համար 2—3 տուգ.

13. Առանց ադմինիստրացիայի թույլտվության հիմնարկության կայքը, կամ գործնական թղթեր իր հետ տանելու համար

1-ից մինչև 2 անգամ 2 տուգ.

3 անգամից ավել 3 »

14. Հարբած դրության մեջ աշխատանքի գալու, կամ հիմնարկության մեջ վոդեկից խմիչքներ խմելու համար

առաջին անգամ 2

յերկրորդ » 3

15. Ադմինիստրացիայի օրինական կարգադրությունները չկատարելու համար

1-ին անգամ 2 տուգ.

2-րդ » 3 »

Վերահիշյալ ներքին կանոնադրությունը ընդհանուր և Ազնավթի բոլոր ձեռնարկությունների ու վարչությունների համար:

Այդ հիմունքների վրա առանձին ձեռնարկների համար մշակված ներքին կանոնադրութիւնը համաձայնեցված միութեան համապատասխան որդանների հետ պետք է ներկայացվեն շրջանային Աշխ. Վերատեսչին վավերացման համար:

Տուգանքների ցուցակը փոփոխման չի յենթարկվում:

Հաւելւիւած № 5.

Հաւելւիւած պայմանագրի § 12-ի

ԱՆԴՐԿՈՎԿԱՅՅԱՆ ԱՇԽԱՏԱՐԿԱՅԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

16 հունվարի, 1925 թ.

Աշխատանքի կողմնի «յե» կեսի 47-րդ լիւ 68-րդ հոդվածների գործադրության կարգի մասին.

Ի փոփոխումն Անդրաշխժողկոմի 1923 թ. հունիսի 2-ի բացատրութեան և Անդրաշխժողկոմի 1924 թ. 23 հունիսի № 106 վարդման (Անդրկովկասյան Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետութեան ներքին աշխատանքի մասին գոյութեան ունեցող որենքների ժողովածու յեր. 100): Անդրաշխժողկոմը վարդում և աշխատանքի կողմնի «յե» կեսի 47-րդ և 68-րդ հոդվածների գործադրութեան ներքին շարժում կարգը.

1) Վարձողը իրավունք ունի աշխատավորներին հասնող վարձատրութեանը զաղարեցնել, մինչև որին նախան ուժի մեջ կմանի արդարացուցիչ զատավճիռը կամ վորդումը՝ գործի կարճելու մասին՝ հետեյալ ղեկարգում.

ա) Աշխատավորի բանտարկված լինելու ղեկարգում, ղատարանի պատասխանատւութեան յենթարկելու ղեկարգում, նույնպէս և աղմկն խտրատիվ կարգով բանտարկութեան ղեկարգում:

բ) Դատական-քննողական իշխանությունների վերոշմամբ՝ ժամանակավոր գործից հեռացնելու դեպքում:

Ծանոթություն.— Աշխատավարձի վճարումների գաղարկեցնելու վերահիշյալ դեպքերում ԳԿԿ համաձայնությունը չի պահանջվում:

2) Վարձողը գործի շահի տեսակետից իրավունք ունի գործից հեռացնել աշխատավորին՝ աշխատավարձը չվճարելով, յեթե նա բռնվում և քրեական-պատժիչ գործողության մեջ, վերը անմիջական կապ ունի նրա աշխատանքի հետ կամ յերբ նա խոստովանվում և այդպիսի գործողությունը:

Նման դեպքերում գործից հեռացնելը և աշխատավարձի վճարման գաղարկեցնելը պետք և նախապես համաձայնեցրված լինի ԳԿԿ-ի հետ և վերոշվում և մինչև դատական կարգով հարցի լուծումը:

Ծանոթություն.— Աշխատավորին վարձողը իրավունք չունի գործից հեռացնել աշխատակցի, յեթե նա կատարել և վերև քրեական-պատժիչ գործողություն, վերը կապ չունի նրա գործի հետ, առանց դատական քննիչ իշխանությունների պահանջի:

3) Հոդ. 2-ի հիման վրա վարձողի գործից հեռացրած աշխատավորի արգարացնելու կամ գործը կարճելու դեպքում, վարձողը պարտավոր և լիովին վճարել նրա վարձատրությունը աշխատանքի համար, վեր անցել և վճարումն գաղարկեցնելու ժամանակից, մինչև արգարացուցիչ վճիռը կամ գործի կարճելը: Բացի դրանից, յեթե վարձողի պահանջով արձակված

աշխատավորը վերադարձնվի գործի վարձողի պահանջով, նույնիսկ յերկու ամիս անցնելուց հետո, պետք և նրան տրվեն նույն վարձը և աշխատանքի վերակը:

4) Հոդ. 1-ի անձանց արգարացուցիչ գատավճուխ կամ գործերի կարճելու դեպքում, յերբ նրանք բանտարկված կամ գործից հեռացրած են լինում քրեական-պատժիչ գործերի մեջ մեղադրվելով, վեր անմիջական կապ ունի նրա գործի հետ, վարձողը պարտավոր և վճարել աշխատավարձը վոչ ավել քան յերկու ամսվա համար՝ բանտարկության կամ գործից հեռացնելու ժամանակից:

Յեթե, աշխատանքի մեղադրանքը, վեր բարդված և այդ անձանց վրա դատական կամ վարչական որդանների կողմից, անմիջական կապ չունի նրանց աշխատանքի հետ, ապա վարձողը, ԳԿԿ-ի համաձայնությամբ, կարող և ազատվել վարձատրության վճարելուց նույնպես և աշխատավորի՝ աշխատանքից առաջին յերկու ամսվա բացակայության դեպքում:

5) Դատական մեղադրական վճուխ կամ վարչական կարգով տուգանման դեպքում բաց թողնված ժամանակի համար վարձատրություն չի տրվում: Այս սրկանքը գործադրվում և քրեական-պատժիչ գործողության դեպքում կամ արարքի վեր կապ ունի, կամ ամենևին կապ կապ չունի աշխատանքի հետ:

6) Աշխատանքային պայմանագրի խախտումը՝ առանց ԳԿԿ-ում հարցը քննելու և յերկու յեռի նպատակով կարող և լինել՝ 2 ամիս անց՝ գատական-քննողական որդանների պահանջամբ բանտարկության կամ գործից հեռացնելու դեպքում, նույնպես և դատական

մեղադրական վճռի որոշումը ուժի մեջ մտնելը (բայց վրէժ վարչական տուգանումները) նույնիսկ 2 ամիս ժամանակից առաջ:

7) Բանտարկությունը կամ գործից հեռացված լինելը չի ընդհատում այն ժամանակամիջոցը, վորը անհրաժեշտ է վերականգնելու համար՝ համաձայն գոյություն ունեցող որոշումների՝ գործազրկության նըպաստ ստանալու իրավունքը, բայց միայն այն դեպքում, յեթե յեղել է արդարացնող դատավճիռ կամ գործի կարճումը:

8) Սույն վորոշումը գործադրվում է նույնպես այն բոլոր դեպքերում, վորոնք չեն վճռված մինչև սրա հաստատումն ու հրատարակությունը:

Անդրաշխտակով Ս. ՅԱՂՈՒԲՈՎ.

Կազմբաժնի վարիչ՝ ԳՈՒՍԵՐԵՆԻՉԵ.

Հավելված № 6

Հավաքական պայմանագրի

§ 17-ին

ԱՋՆԱՎԹԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ 17-ԿԱՐԳԱՆՈՅ ՏԱՐԻՖԱ-
ՅԻՆ ՅԱՆՅԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ.

1 - ի ն կ ա ռ գ (1 փայ)

Աշակերտներ.—Սկսնակ, նախ քան սովորելը մի տարի:

2 - ը գ կ ա ռ գ (1,3 փայ)

Թղթասարներ.—Զանազան հանձնարարություններ չի համար: Թղթեր տանելը:

Աշակերտներ.—Մի տարուց ավելի սովորողներ:

3 - ը գ կ ա ռ գ (1,6 փայ)

Սալապաններ.—Էծում, վարում են մի ձիուն, սարքը հանում են, բեռները դարսում և իջեցնում են, վառելիք ու ջուր են տանում: Զիւս սարքին խնամք տանել, անիվներին յուղ քսել, հսկել սայլի կանոնավոր լինելուն: Ախոռապանի բացակայության ժամանակ (միայնակ սայլապանը)—խնամում է ձիուն (կերակրում, ջրում, մաքրում) և սրբում են ախոռը:

Բաղնիսպաններ.—Բաղնիքի ներսում հերթապահները, մաքրում ու կարգի են բերում, հսկում են վառելիքին, բաղնիք յեկողների տոմսակներն են ստուգում, զգեստներին են հսկում, նույնպես և ծառայում են բաղնիքի կից լվացատները:

Պարավոզի (շոգեկարգի) ջուր ամոզները.— Զուր և և ամուսն շոգեկարգում:

